Ազգ
Azg
19 ՀՈՒԼԻՍ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 132(4751)
ISSN: 1829-1651

# Առանց սկզբունքների համաձայնեցման խաղաղության պայմանագիր չես մշակի

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Երեւանում**

Առանց հիմնարար սկզբունքների համաձայնեցման անմիջապես խաղաղ պայմանագրի մշակմանն անցնելու վերաբերյալ Բաքվից հնչող հայտարարությունները հակասում են թե՛ բանակցային գործընթացի տրամաբանությանը, թե՛ միջնորդների դիրքորոշմանը: Այս մասին, ըստ ԱԳՆ հաղորդագրության, երեկ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադկեի, Բեռնար Ֆասիեի եւ Իգոր Պոպովի, ինչպես նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի հետ հանդիպմանը ասել է Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը**:

Հանդիպմանը շարունակվել են քննարկումները արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացում առաջընթաց արձանագրելու նպատակով նախատեսվող քայլերի վերաբերյալ: Համանախագահները Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարին են ներկայացրել Բաքվում ունեցած իրենց հանդիպումներից ստացված տպավորությունները:

Համանախագահները երեկ հանդիպել են նաեւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին, քննարկել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային գործընթացի ներկա փուլին վերաբերող հարցեր: Այդպիսով ամբողջացել է տարածաշրջանային այցելության հանդիպումների շարքը, բացառությամբ Լեռնային Ղարաբաղ այցելության, որը տեղի չունեցավ. ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանն արձակուրդում է:

Այդուհանդերձ, ինչպես դեռեւս նախորդ շաբաթավերջին Բաքու կատարած այցելությանը խոստացել էին միջնորդները, Երեւանում նրանք ԱԳՆ-ում ճեպազրույցի ընթացքում անդրադարձել են այցելությանն ու հանդիպումներին: Ըստ «Ազատության»՝ ամերիկացի համանախագահ **Ռոբերտ Բրադկեն** նշել է, որ ներկայումս ղարաբաղյան հակամարտության լուծման դիվանագիտության շատ ակտիվ փուլ է, եւ առաջիկա շաբաթներին տեսանելի կլինեն գործադրվող ջանքերի արդյունքները:



Տես էջ 8

# ՀԱԿ-ը նա՞զ է ծախում, թե ակնարկում է tête-à-tête հանդիպման մասին

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Չնայած մեկ օր առաջ Հայ ազգային կոնգրեսը հայտարարություն էր տարածել, թե իշխանությունը գործադիր իշխանությունից պետք է պատվիրակություն ձեւավորի, որ ՀԱԿ-ը երկխոսության գնա, այնուամենայնիվ իշխանության արդեն կազմավորած կոալիցիոն պատվիրակությանն էլ պատրաստ են լսել: Այնպես որ՝ երեկ ՀԱԿ-ի եւ կոալիցիոն պատվիրակությունները հանդիպեցին եւ այն էլ ոչ թե, ասենք, ինչ-որ հյուրանոցում կամ հանգստի վայրում, ինչպես ավելի վաղ տարբեր շրջանակներ կատակում էին, այլ Հանրային խորհրդի ժողովասրահում: Կոալիցիոն պատվիրակությունը եկել էր ողջ կազմով՝ Դավիթ Հարությունյանը, Գագիկ Մինասյանը (երկուսն էլ ՀՀԿ-ից), Վարդան Բոստանջյանն ու Նաիրա Զոհրաբյանը (ԲՀԿ), Մհեր Շահգելդյանն ու Խաչիկ Հարությունյանը (ՕԵԿ): ՀԱԿ-ի պատվիրակության վաղուց հայտնի կազմն էլ լրիվ էր՝ Դավիթ Շահնազարյան, Լեւոն Զուրաբյան, Վահագն Խաչատրյան, Սամվել Աբրահամյան, Ֆելիքս Խաչատրյան: Հանդիպումն ընթացավ փակ ձեւաչափով, մոտ երկու ժամ տեւած հանդիպումից հետո կոալիցիայի անունից լրագրողների հարցերին պատասխանած կոալիցիոն պատվիրակության ղեկավար **Դավիթ Հարությունյանը** նախ դրական համարեց հանդիպումը՝ նշելով, որ կոալիցիոն պատվիրակությունը ներկայացնում է հենց Հայաստանի նախագահին եւ գործադիր իշխանությանը, ապա նշեց, թե հանդիպման ընթացքում էլ պատվիրակության անդամները ներկայացրել են իշխանական կողմի պատկերացումը երկխոսության մասին: Դեռ հավելեց, որ երկխոսությունն իշխանության ընկալմամբ նշանակում է նոր մշակույթի ձեւավորում, որը, սակայն, բացարձակ հակամարտությունից անմիջապես համագործակցությանն անցում չէ, չնայած ինքը լավատեսորեն է տրամադրված:



ՖՈՏՈԼՈՒՐ

Տես էջ 2

# Բռնության դեպք եւ անզգուշությունից մահ բանակում

**Երեկ պաշտպանության նախարարությունից ստացված հաղորդագրության համաձայն՝ հուլիսի 15-ին, ժամը 20:30-ի սահմաններում ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Խաչատուր Հրաչիկի Թադեւոսյանը (ծնված 1988-ին, զորակոչված Շենգավիթի զինկոմիսարիատից) մարտական հենակետում խախտել է զենքի հետ վարվելու կանոնները՝ ինքնաձիգով անզգուշաբար կրակել ու սպանել համածառայող Կոլյա Հովհաննեսի Մեսրոպյանին (ծնված 1992-ին, զորակոչված Կենտրոնի ԶԿ-ից):**

**Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայության 8-րդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:**

**Բանակի վերաբերյալ մեկ այլ հաղորդագրություն երեկ փոխանցեց Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, ըստ որի՝ դիմում է ներկայացվել զինվորական դատախազություն եւ պաշտպանության նախարարություն՝ Վայքի Խաչիկ գյուղի 4-րդ գումարտակի զինծառայողի նկատմամբ ծեծի, բռնությունների եւ անմարդկային վերաբերմունքի մասին: Իր որդու իրավունքների պաշտպանության համար կազմակերպությանն է դիմել Ռ. Հովհաննիսյանը եւ հայտնել, որ գումարտակի ինչ-որ սպա, որդու մոտ հեռախոս տեսնելով, վերցրել է այն եւ հրամայել՝ որպես պատիժ, փորի վրա կատարել վարժություն»: Տղան հրաժարվել է կատարել սպայի հրամանը, որից հետո ենթարկվել է «ծեծի, բռնությունների եւ անմարդկային վերաբերմունքի»:**

**Այս կապակցությամբ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դիմել է զինվորական դատախազություն՝ պահանջելով գործի առնչությամբ հարուցել քրեական գործ եւ հաղորդման վերաբերյալ կայացրած որոշումը տրամադրել կազմակերպությանը:**

**Անշուշտ՝ ցավալի է ամեն մի նման դեպք ազգային բանակում: Որեւէ մեկը որեւէ սպայի իրավունք չի տվել՝ անկախ ամեն ինչից ծեծի, բռնության, առավել եւս՝ անմարդկային վերաբերմունքի արժանացնել զինվորներին: Այդպիսի սպաները պետք է տեղ չունենան հայկական բանակում: Սակայն փորձենք այդուհանդերձ սառնասրտորեն հասկանալ իրավիճակը երկու դեպքերում: Սպանության դեպքում, ըստ պաշտոնական հաղորդագրության, գործ ունենք «անզգուշության հետ», իսկ ո՞վ է մեղավոր դրա համար, երբ մարտական հենակետի պատասխանատուն, սովորաբար՝ սպան, ամենեւին էլ հենակետը հսկող զինվորների կողքին չպետք է լինի կանգնած: Իհարկե՝ զինվորն ինքը, որն, օրինակ, պարտավոր է, թեկուզ չլիցքավորված զենքը երբեք չպահել ծառայակից ընկերոջ վրա: Երկրորդ իրավիճակում ի՞նչ իրավունքով է զինվորը իր մոտ պահել հեռախոս, երբ այն ՀՀ ԶՈՒ կանոնադրությամբ արգելված է: Կրկնենք՝ այս ամենը հաշվի առնելով էլ՝ վերջին պարագայում սպայի պահվածքը, եթե իրոք հենց այդպես է եղել, դատապարտելի է:**

Հ. ԱՓՅԱՆ

# Տուժողը բացահայտեց

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Երբ մենք Իլհամ Ալիեւից կառավարվող քարոզչությունը կեղծարար ենք համարում, Բաքվում իսկույն վիրավորվածի տեսք են ընդունում: Բայց ի՞նչ կարող ենք անել. հերթական «հրետանային նախապատրաստությունը», որ ՄԽ համանախագահների եւ Եվրախորհրդարանի մի խումբ պատգամավորների՝ Բաքվում գտնվելու օրերին կազմակերպել էր Իլհամ Ալիեւի աշխատակազմը՝ ներգրավելով ԱԳՆ-ին, կառավարող կուսակցությանն ու Գանիրա Փաշաեւայի նման «էգ առյուծին», անառարկելիորեն վկայում է, որ ալիեւյան քարոզչությունը ոչ միայն կեղծիք, այլեւ ավելի շատ պարզ հիմարություն է:

Խնդրեմ. ադրբեջանական ANS հեռուստատեսությունը հարցազրույց է կազմակերպել զոհված Այգյուն Շախմալիեւայի մոր՝ Էլնարա Շախմալիեւայի հետ: Ի դեպ, վերջինիս հանդեպ ուշադրություն սրելու նպատակով Միլլի մեջլիսի պատգամավոր Գանիրա Փաշաեւան շտապ մեկնել էր Թովուզ եւ «ծանր վիճակում գտնվող կնոջը» տեղափոխել Բաքու՝ վնասվածքաբանության եւ օրթոպեդիայի ինստիտուտ:

Ի՞նչ է պատմել Էլնարա Շախմալիեւան. «**Ես սպասք էի վերցնում արկղից:** Կռացա, եւ հանկարծ ծուխն ինձ պատեց: Երբ այն ցրվեց, տեսա, թե ինչպես է ճչում եղբորս աղջիկը: Շրջվեցի եւ իմ աղջկան տեսա գետնին... **Վազեցի դեպի ճանապարհը: Չգիտեի, որ գնդակն ինձ էլ է դիպչել** (ընդգծումները մերն են- Վ. Ա.): Ոտքերս ծալվեցին, եւ ես ընկա...»:

Ո՞րն է այստեղ էականը:

Նախ, պաշտոնական վարկածով՝ Այգյունը զոհվել է «խաղալիքի պայթյունից՝ Ջաֆարովների տանը, երբ, վերադառնալով գետափից, շնիկանման խաղալիքը դրել է ճաշասեղանին»:

Տես էջ 5

# ՀԵՆՐԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ



Կյանքի 71-րդ տարում վախճանվեց Հայաստանի Հանրապետության վաստակավոր իրավաբան, դատաիրավական համակարգի վաստակաշատ գործիչ Հենրիկ Մուրադխանի Դանիելյանը:

Հենրիկ Դանիելյանը ծնվել է 1940 թ. նոյեմբերի 7-ին Սեւան քաղաքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Սեւանի «Հայձուկ» տրեստում որպես մեքենավար: 1960-63թթ. աշխատել է «Սեւան» թերթի խմբագրությունում՝ նախ որպես գրական աշխատող, ապա՝ բաժնի վարիչ, 1965-69 թվականներին՝ որպես թերթի պատասխանատու քարտուղար:

1963-65թթ. եղել է ՀԼԿԵՄ Սեւանի շրջկոմի առաջին քարտուղար:

Իրավագետի կրթությունը ստանալուց հետո (1961-67թթ. ուսանել է Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում) Հ. Դանիելյանը ընտրվում է Սեւանի շրջանի դատավոր: Դատաիրավական համակարգում Հ. Դանիելյանի բարեխիղճ, սկզբունքային աշխատանքը գնահատելով՝ նրան ընտրում են (1977թ.) Խորհրդային Հայաստանի Գերագույն դատարանի անդամ:

Երբ անկախ Հայաստանի Հանրապետությունում ստեղծվում է ՀՀ վճռաբեկ դատարանը, այդ կառույցի նախագահի արժանի թեկնածու համարվում է Հենրիկ Դանիելյանը՝ ՀՀ նախագահի հրամանագրով 1998 թվականին վերջինս նշանակվում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ: Պաշտոնավարելով մինչեւ 2005 թվականը՝ ՀՀ նախագահի հրամանագրով Հ. Դանիելյանը նշանակվում է ՀՀ սահմանադրական դատարանի անդամ:

Այդ ընթացքում Հենրիկ Դանիելյանը Հայաստանի Հանրապետության վաստակավոր իրավաբան էր, ստացել էր «Որակավորման բարձրագույն դասի դատավորի» կոչում:

2005-2010 թվականներին ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ աշխատելու տարիներին Հենրիկ Դանիելյանն իրեն դրսեւորել է որպես արհեստավարժ իրավագետ, իր գործի գիտակ, սկզբունքային եւ ուղղամիտ անձնավորություն: Նա ջերմ հարաբերություններ ուներ կոլեկտիվի հետ, սիրված ու մտերիմ ընկեր էր:

Ծառայողական տարիքը լրանալու կապակցությամբ ընդամենը մի քանի ամիս առաջ էր հրաժեշտ տվել ՀՀ սահմանադրական դատարանի կոլեկտիվին:

Մեծ ու գնահատելի է նրա վաստակը մեր անկախ հանրապետության դատական համակարգի կայացման գործում:

# Մեր ընթերցողներին

Տպարանի գերծանրաբեռնվածության պատճառով ուրբաթ գիշեր «**Ազգի**» մշակութային հավելվածի հերթական համարը հնարավոր չեղավ տարածել ընթացիկ համարի հետ, ինչն անում ենք այսօր, բնականաբար շաբաթ՝ 16 հուլիսի թվականով:

Ապավինում ենք ընթերցողների ներողամտությանը:

# Ինչո՞ւ չի կայանում ՀՌԱԿ համագումարի ընդհատված փուլը

## *Կամ «անշարժ գույքի» շարժման մասին*

«Ազգային գաղափար» (nationalidea.am) կայքէջում լրագրող Ավետիս Բաբաջանյանը նախորդ օրը հանդես է եկել ծավալուն վերլուծությամբ՝ «ՀՌԱԿ-ում հասունացած կոնֆլիկտը հանգուցալուծվում է» վերնագրով։ Հոդվածում, արձագանքելով վերջին օրերին մամուլում ԼՂ պաշտպանության բանակի նախկին հրամանատար Սամվել Բաբայանի տնտեսական գործունեության մասին ծավալված խոսակցություններին, Ա. Բաբաջանյանը ՀՌԱԿ-ի ներսում տիրող աննախիթար վիճակը բացատրում է նախկին հրամանատարի քաղաքական հաշվարկների ու ծրագրերի ձախողությամբ, որի մեխը, ըստ հոդվածագրի, հանրապետության նախորդ եւ ներկա նախագահների միջեւ ենթադրյալ հակասության մեջ հօգուտ առաջինի նրա ազդու դերակատարում ունենալու ձգտումն էր՝ ՀՌԱԿ-ի միջոցով, որի կազմում Ս. Բաբայանը համաձուլել էր իր «Դաշինք» կուսակցությունը Ալբերտ Բազեյանի «Ազգային վերածնունդ» կազմակերպության հետ։

Ինձ համար դժվար է գնահատական տալ Ա. Բաբաջանյանի այդ վերլուծությանը. գուցե նրան հայտնի են փաստեր, որոնք անծանոթ են ինձ։ Բայց կարծում եմ, որ ՀՌԱԿ-ի ներքին խնդիրները ոչ այնքան Սամվել Բաբայանի կամ, առավել եւս, Ռոբերտ Քոչարյանի հետ կապ ունեն, որքան՝ ուղղակի նրա նախկին ատենապետ Հարություն Առաքելյանի։ Ընչաքաղց, միայն սեփական գրպանի համար աշխատելու ընդունակ մեկը, որը պատրաստ է գողանալու պահին բոլորից բարձր գոռալ՝ բռնե՛ք գողին։

Անցյալ տարվա վերջին անսպասելի հրաժարական տվեց ՀՌԱԿ ատենապետ Հարություն Առաքելյանը։ Փաստն արտառոց էր, ուստի կարծում էինք, որ դրա տակ ինչ-որ կասկածելի, թաքնված պատճառ կա։ Այս տարվա հունվարի 20-ին «**Ազգ**»-ի թղթակիցը, լուսաբանելով ՀՌԱԿ արտահերթ համագումարը, ենթադրում էր, որ այդ ինտրիգը կբացահայտվի հենց այդ ժամանակ։ Սակայն կասկածելիորեն հանդարտ անցավ համագումարը, նոր ատենապետի թեկնածությունն էլ առաջարկեց հենց Հարութը, ինչը համագումարի պատվիրակների կողմից միաձայն ընդունվեց։ Չնայած մեր զարմանքն էլ չփարատվեց, քանի որ Հարութը մի առանձնահատուկ ջերմությամբ, ավելի ճիշտ՝ քծնանքով էր համագումարին ներկայացրել Էդվարդ Անտինյանի թեկնածությունը, որով իբր փորձում էր փարատել ներկուսակցական հակասությունների պատճառով իր հրաժարականի մասին կասկածները։ Ի դեպ, հենց այդ ժամանակ Հարութն առաջարկեց, որ համագումարն արվի երկու մասից, որ այդ օրը միայն ատենապետի ընտրությունն անցկացվի, իսկ օրակարգի մնացած հարցերը հետաձգվեն մեկ, մեկուկես ամիս։ Ի դեպ՝ հետաձգված մասի մեջ էին երկամյա գործունեության վերաբերյալ Հարութի ու վերստուգիչ հանձնաժողովի նախագահի հաշվետվությունները։ Սակայն վաղուց անցել է ընդհատված փուլի անցկացման հայտարարված ժամկետը, իսկ այդպես էլ համագումարը տեղի չի ունենում։ Մի՞թե այս անսպասելի հրաժարականի ու համագումարը երկու մասով անցկացնելու տակ մեկ այլ պատճառ չէր թաքնված, որը մեզ արդեն ծանոթ էր, սակայն այդ պահին չուզեցինք բարձրաձայնել։ Բանն այն է, որ դեռ 2000-ականների սկզբներին սփյուռքահայ բարերար, ՌԱԿ Մ. Նահանգների Արեւելյան շրջանի եւ Կանադայի ղեկավարներից Բաբկեն Մկրյանը, որը նաեւ ՀՀ քաղաքացի է, իր անձնական միջոցներով Վանաձոր քաղաքի կենտրոնական մասում մի տարածք էր գնել ու նվիրել ՀՌԱԿ-ին՝ որպես կուսակցության Վանաձորի տարածքային գրասենյակ։ Եվ որքան եղավ նրա զարմանքը, երբ հաջորդ անգամ գտնվելով Վանաձորում, իմացավ, որ այդ տարածքը Հարություն Առաքելյանը վաճառել է («**Ազգ**»-ը այդ փաստին անդրադարձել է 2 անգամ)։ Իհարկե այդ փաստից Բաբկեն Մկրյանը շատ էր վրդովվել, բարձրաձայնելով, որ ինքը լի է վճռականությամբ հաջորդ անգամ Հայաստան գալուն պես (իսկ դա նախատեսված է առաջիկա օրերին) դատական գործ բացել Հարութի դեմ, քանի որ իրեն հասած տեղեկություններով, այդ առուծախը կատարվել է կեղծված փաստաթղթերի հիման վրա, ուստի ոչ միայն անբարոյական է, որ նվիրածը վաճառվել է, այլեւ՝ անօրինական։ Ահա թե ինչից էր վախեցել Հարութը, որ ցանկանում էր համագումարի ատենապետի ընտրության մասը անել հրապարակային, սիրաշահել հանրությանը, մամուլին, դրանով իսկ «կաշառել» նորընտիր ատենապետին, որպեսզի համագումարի երկրորդ՝ հասարակության համար առանձնապես հետաքրքրություն չներկայացնող մասը անցկացներ թաքուն, ու իր երկամյա գործունեության հաշվետվությունն էլ լիներ աչքից հեռու։

Հարցի պարզաբանման համար «**Ազգ**»-ը երեկ դիմեց ՀՌԱԿ ատենապետ **Էդվարդ Անտինյանին**։ Նա նշեց. «Համագումարի ընդհատված մասի հետ կապված ոչ մի մութ հարց էլ չկա, քանի որ հենց համագումարի ժամանակ է Հարություն Առաքելյանն առաջարկել օրակարգի մյուս հարցերը հետաձգել, եւ պատվիրակներն էլ միաձայն համաձայնել են։ Ինչ վերաբերում է իբր ֆինանսական ապօրինությունների ձեր բարձրացրած հարցին, ես դեռ չեմ ընդունել փաստաթղթերը նախկին ատենապետից եւ այդ ուղղությամբ ոչինչ ասել չեմ կարող։ Փաստաթղթերը կընդունեմ, հնարավորինս արագ կանենք համագումարի ընդհատված մասը, կանենք հրապարակային՝ ինչպես նախորդը, եւ դուք կհամոզվեք, որ ոչ մի ծածկամփոփ հարց էլ գոյություն չունի, եւ ձեր կասկածներն առնվազն անհիմն են»։

Մեզ հայտնի է դարձել նաեւ, որ վաճառվել են ոչ միայն Վանաձորի, այլեւ ընդհանրապես ՀՌԱԿ-ի մարզային բոլոր գրասենյակները՝ թվով 5։ Հասկանալի է, որ նման գործարքներն առանց ՌԱԿ Կենտրոնական վարչության ատենապետ Մայք Խարապյանի համաձայնության՝ հնարավոր չէր։

Մենք հետամուտ ենք լինելու «անշարժ գույքի» շարժման այս գործընթացին եւ հետագայում կտանք այլ տեղեկություններ, քանի որ ինչ-որ մեկի ժուլիկության պատճառով վարկաբեկվում է հայ իրականության ամենահին կուսակցությունը, ինչու չէ՝ մեր սփյուռքահայ գործընկերների աչքում նաեւ՝ մեր երկիրը։

Ռ. Ա.

ՀԱԿԻՐՃ

## «Գալա» հեռուստաընկերությունը կեթերազրկվի փաստացի

**«Գալա» հեռուստաընկերության դեմ սկսված դատական գործընթացը մոտենում է ավարտին։ Վճռաբեկ դատարանը մերժել է հեռուստաընկերության փաստաբանի ներկայացրած վճռաբեկ բողոքը, փոխարենը ուժի մեջ է թողել Վերաքննիչ դատարանի որոշումը, որի համաձայն՝ հեռուստաընկերությունը պարտավոր է Գյումրու հին հեռուստաաշտարակի վրայից ապամոնտաժել հեռարձակում իրականացնող սարքավորումները։**

Ի. Պ.

## Մրցույթ ռեկտորի պաշտոնի համար

**Եթե դուք ունեք գիտամանկավարժական աշխատանքի փորձ, գիտությունների դոկտորի գիտական աստիճան կամ պրոֆեսորի գիտական կոչում, ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, ռեկտորի պարտականությունների կատարման անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն եւ կարող եք ներկայացնել համալսարանի զարգացման բարեփոխման հայեցակարգեր, ապա կարող եք մասնակցել ՀՀ ԿԳ նախարարության հայտարարած Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (մրցույթը տեղի կունենա 2011 թ. սեպտեմբերի 3-ին ժամը 11-ին), Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական համալսարանի (սեպտեմբերի 3-ին, ժամը 12-ին) եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 2011 թ. սեպտեմբերի 3-ին ժամը 11-ին) ռեկտորների թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթին։ Օն անդր, յառա՜ջ։**

Հ. Հ.

# HTC սմարթֆոններն արդեն հայերեն են «հասկանում»




**Orange Care-ը տեղեկացնում է, որ այսուհետեւ կարելի է HTC Desire HD եւ Desire Z սմարթֆոններով կարդալ նաեւ ինտերնետային հայերեն էջեր, ինչը նախկինում անհնար էր։ Դեռեւս մի քանի ամիս առաջ, ականջալուր լինելով իր բաժանորդների խնդրանքներին, Orange-ը դիմել էր իր պաշտոնական գործընկեր HTC ընկերությանը՝ խնդրին լուծում տալու խնդրանքով, որի արդյունքում այսօր արդեն երկու սմարթֆոններ «հասկանում են» հայերեն տեքստերը։**

**Այն բաժանորդները, ովքեր արդեն HTC Desire HD կամ Desire Z են գնել ընկերության խանութներում, կարող են Orange Care անկյուններում ստանալ բոլոր համապատասխան թարմացումները եւ վայելել Android օպերացիոն համակարգի հնարավորությունները՝ զրկված չլինելով հայերեն էջերից։ Հայերեն տառերը կարդալու համար ավելի «գիտակ» բաժանորդները կարող են նաեւ ինքնուրույն կատարել անհրաժեշտ թարմացումը՝ բեռնելով Android օպերացիոն համակարգի 2.3.3 տարբերակը։**

**Orange-ը շարունակելու է HTC սմարթֆոնների եւ Android օպերացիոն համակարգով աշխատող այլ սարքավորումների կողմից հայերեն տառերի ճանաչմանն ուղղված ջանքերը՝ նպատակ ունենալով ներառել հնարավոր բոլոր մոդելները։**

# ՀԱԿ-ը նա՞զ է ծախում, թե ակնարկում է tête-à-tête հանդիպման մասին

*1-ին էջից*

**Դավիթ Շահնազարյանը** լրագրողներին հայտնեց, թե կոալիցիոն պատվիրակության հետ հանդիպման ընթացքում պարզվել է, որ այս պատվիրակության լիազորությունները շատ ավելին են, բացի դրանից՝ պատվիրակության անդամները հավաստիացրել են, որ ցանկացած հարց պատրաստ են քննարկել, ու չկան այնպիսի հարցեր, որոնք քննարկման ենթակա չլինեն. «Հանդիպում՝ որպես այդպիսին, տեղի չունեցավ, բայց ես կարծում եմ, որ որոշակի արդյունքներ կան, եւ ես չեմ բացառում, որ սա կարող է շարունակություն ունենալ», ասաց նա։ «Արտահերթ ընտրությունների թեման շոշափվե՞ց», **«Ազգի»** հարցին Շահնազարյանը պատասխանեց. «Անկասկած։ Մենք ներկայացրինք մեր տեսակետները, ինչպես նաեւ այն, որ քաղաքական այս խոր ճգնաժամից միակ ելքը մենք տեսնում ենք նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների միջոցով, ինչպես նաեւ, որ մինչեւ սեպտեմբեր այդ հարցերը այսպես թե այնպես պետք է հստակեցվեն», ասաց Շահնազարյանը՝ հավելելով, որ «խորացող այս քաղաքական ճգնաժամի՝ օր ավել շարունակվելը մեծ վտանգներ է պարունակում», սակայն ինքը ռեալիստ է ու կարծում է, թե երկխոսությունը շարունակություն կունենա։ ՀԱԿ համակարգող **Լեւոն Զուրաբյանը** եւս նկատեց, որ կոալիցիայի պատվիրակության հայտարարությունները նոր հանգամանքներ բացահայտեցին, այսինքն՝ որ նրանք շատ ավելի լայն լիազորություններ ունեն, եւ ՀԱԿ-ը կսպասի, մինչեւ այդ լիազորությունների մասին հստակ հայտարարություններ արվեն, քանի որ կոալիցիայի պատվիրակության՝ հանդիպման ընթացքում հնչած հայտարարություններով ՀԱԿ-ն իր որոշումների մեջ չի կարող կողմնորոշվել. «Մինչեւ նրանց հայտարարությունները հանրության սեփականությունը չդառնան՝ մենք չենք կարող որոշում ընդունել։ Մենք կսպասենք՝ երբ այդ հայտարարությունները կարվեն, հետո մեր դիրքորոշումը կհայտնենք։ Պետք է խոսք գնա այնպիսի պատվիրակության մասին, որը ներկայացնում է գործադիր իշխանությանը, գործող նախագահին, այսինքն՝ մի պատվիրակություն, որը կարող է լրջորեն քննարկել այն լուծումները, որոնք մենք առաջարկում ենք երկրում իրավիճակը կարգավորելու համար։ Սա հիմնական պատվիրակություն չէ։ Մենք ասել ենք, որ մինչեւ սեպտեմբեր որեւէ արդյունք եթե չլինի, մենք կհամարենք երկխոսության հնարավորությունները սպառված»։ Նա նշեց, որ բուն բովանդակային քննարկում չի եղել, չնայած ՀԱԿ-ը հանդիպումից ըմբռնել է, որ այս պատվիրակությունը որեւէ հարցի քննարկում չի բացառում։ Լեւոն Զուրաբյանն ասում էր, որ ուղիղ եթեր են պահանջում, չեզոք հանդիպավայր՝ այս, Հանրային խորհրդի սրահի հանդիպմանն էլ հավան չէ։ Ո՞վ պետք է լինի իշխանական պատվիրակությունում, որ Լեւոն Զուրաբյանն ուզենա հարց քննարկել. «Գործող նախագահը, իշխանության բոլոր այն ներկայացուցիչները, որոնց համաձայնությունն անհրաժեշտ է՝ արտահերթ ընտրությունների համար։ Մեր կարծիքով դեֆակտո այդ հարցերը լուծում է Սերժ Սարգսյանը։ Պնդում ենք, որ պատվիրակությունը պետք է ունենա հստակ լիազորություններ Սերժ Սարգսյանի կողմից»։ Այսինքն՝ Զուրաբյանն ակնարկում է Տեր-Պետրոսյան-Սարգսյան tête-à-tête հանդիպման մասի՞ն, թե ՀԱԿ-ը նազ է ծախում, որպեսզի միանգամից տրվելով լրիվ չանվանարկվի։

Չնայած հանդիպումից առաջ ԲՀԿ-ից **Վարդան Բոստանջյանն** ասել էր, որ հանդիպման ժամանակ կփորձեն օրակարգ ձեւավորել, փաստենք սակայն, որ այդ օրակարգն այդպես էլ չի ձեւավորվել, եւ որեւէ համաձայնություն չի ձեռք բերվել։ Առաջինը միշտ կուս է գնում, այդպե՞ս մտածենք, թե՞ նաեւ բնական է՝ ստուգիչ հանդիպում էր, որից հետո թիմերը մարտավարական առումով կկողմնորոշվեն։

Ամեն դեպքում տեսակետները փոխանցեցինք, իսկ հետեւող զարգացումները այսօր ավելի հստակություն կմտցնեն։

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

| | |
|---|---|
| Գլխաւոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ | / հեռ 521635 |
| Խմբագիր ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ | / հեռ 529221 |
| Հաշվապահութիւն (գովազդ) | / հեռ 582960 |
| Լրագրողների սենեակ | / հեռ 581841 |
| Համակարգչ. ծառայութիւն | / հեռ 582483 |
| *Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* | / հեռ 529353 |

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի։
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում։
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում։

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ **Անցուդարձ**

# Եռակի տոն Ալավերդիում

Լոռու մարզի Ալավերդի քաղաքում կիրակի օրը տոն էր, ավելի ճիշտ՝ եռակի տոն. նշում էին Ալավերդի քաղաքի օրը, հանքագործի ու մետալուրգի մասնագիտական տոնը եւ Ալավերդու պղնձաձուլական գործարանի հիմնադրման 241-ամյակը: Չնայած քաղաքում տոնական օր էր, ալավերդցիներն առանձնակի ուրախ ու խանդավառ չէին. պատճառը քաղաքի հազարումի խնդիրներն են՝ սոցիալական, առողջական, բնապահպանական եւ այլն: Ինչեւէ, տոնական մթնոլորտ ստեղծելու համար գոնե արտաքուստ ամեն ինչ կազմակերպվել էր հավուր պատշաճի:





Տոներին նվիրված միջոցառումներն ու հանդիպումները կազմակերպել էին «Վալլեքս» խումբն ու Ալավերդու քաղաքապետարանը: Ալավերդի ժամանած հյուրերի ու լրագրողների հետ առաջին հանդիպումը եղավ Ալավերդու պղնձաձուլական գործարանի վարչական շենքում, որտեղ ներկա էին նաեւ «Վալլեքս» խմբի «Արմենիան քափըր փրոգրամ» (ACP) ընկերության ղեկավարությունն ու Ալավերդու քաղաքապետարանի ներկայացուցիչները: Հանդիպման ժամանակ «Վալլեքս» խմբի ընկերությունների նախագահ **Վալերի Մեջլումյանն** անդրադարձավ ընկերությունների աշխատանքին եւ պատասխանեց լրագրողների հարցերին: Հիշեցնենք, որ Ալավերդու պղնձաձուլական գործարանը պատկանում է «Արմենիան քափր փրոգրամ» ընկերությանը: Սկզբում Վալերի Մեջլումյանը խոսեց «Թեղուտ» ընկերության ծրագրերից: Նրա խոսքով՝ Թեղուտի կոմբինատի աշխատանքը սկսելուց հետո Հայաստանում արդեն կարտադրվի ավելի քան 1000 տոննա պղինձ, պղնձի խտանյութ. «Եվ դա լուրջ հիմք է, որ հետագայում ունենանք ժամանակակից պղնձաձուլարան»: Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատանքները նախատեսվում է սկսել 2 տարի հետո, իսկ ներդրումների ծավալն արդեն կազմում է շուրջ 100 միլիոն դոլար: Ըստ Վալերի Մեջլումյանի՝ նախատեսվում է շուրջ 3 տարվա ընթացքում գործարկել Ալավերդու ծծմբաթթվի արտադրության աշխատամասը:

Ներկաներին նաեւ հետաքրքրում էր՝ Թեղուտի հանքավայրը շահագործելու համար որքա՞ն ծառեր են հատվել եւ հատվելու: «Վալլեքս» խմբի ընկերությունների փոխնախագահ **Գագիկ Արզումանյանը** ասաց, որ հանքավայրը շահագործելու համար նախատեսված է հատել 357 հա անտառ. «Սակայն մեր ստանձնած պարտավորությունը ենթադրում է նույն ժամանակահատվածում իրականացնել կրկնակի ծավալով անտառապատման աշխատանքներ: Այս պահին շուրջ 65 հա տարածք է հատվել, եւ կրկնակի ծավալով անտառապատումն արդեն կատարված է»: Նրա փոխանցմամբ՝ առաջիկայում Ալավերդիում էլ շահագործվելու է նոր ծխատար, ինչի շնորհիվ քաղաքի բնակչության վրա գործարանային արտանետումների վնասակար ազդեցությունը կնվազի: «Սակայն դա վերջնական լուծում չէ», հավելեց Վալերի Մեջլումյանը:

Հանդիպմանը ներկա էր նաեւ Ալավերդու քաղաքապետ **Արթուր Նալբանդյանը**, որն էլ անդրադարձավ քաղաքի խնդիրներին: Փաստացի 17 հազար բնակիչ ունեցող Ալավերդիում, ըստ քաղաքապետի, խնդիրները հիմնականում կապված են էկոլոգիային ու գործազրկությանը: Լոռու մարզում հանքավայրերի շահագործումը մի կողմից բնակչության համար բացում է նոր աշխատատեղեր, բայց մյուս կողմից քայքայում մարդկանց առողջությունը: Թունավոր արտանետումները նվազեցնելու եւ դրանք ֆիլտրելու ուղղությամբ անհապաղ քայլեր են հարկավոր: «Վալլեքս» խումբը ստեղծում է նոր աշխատատեղեր, սակայն անդառնալի կորուստների հաշվին՝ առողջական կորուստների: Երբ ճոպանուղով բարձրացանք վերեւ՝ տեսնելու քաղաքի համայնապատկերը, մեր առջեւ զարմանալի տեսարան բացվեց. ամբողջ Ալավերդին «կորել էր» ծխի մեջ: Գործարանի ծխատարից դուրս եկող ահռելի քանակությամբ ծուխը մշուշել էր տները, շենքերն ու բնությունը: Իսկ այդ բոլոր թունավոր արտանետումները շնչում են բնակիչները, եւ այս խնդիրը տարիներ շարունակ մնում է չլուծված: «Վալլեքս» խմբի շատ աշխատակիցներ, որոնք աշխատում են գործարանում, գերադասում են շնչել թունավորված օդը, միայն թե չմնան գործազուրկ: Իսկ քաղաքի մյուս բնակիչները... չէ՞ որ բոլորը «Վալլեքսի» աշխատակիցները չեն...

Ալավերդու պղնձաձուլական գործարանում տարեկան վերամշակվում է մինչեւ 50 հազար տոննա խտանյութ, արտադրվում եւ իրացվում է մինչեւ 10 հազար տոննա անգուտ պղինձ:

Քաղաքի խնդիրները քննարկելուց հետո քաղաքի հյուրերը, տեղի բնակիչները, «Վալլեքս» խմբի աշխատակիցներն ու լրագրողները գնացինք Ալավերդու մշակույթի կենտրոն, որտեղ նույն օրը բացվեց ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Խաչատուր Իսկանդարյանի քանդակների ցուցահանդեսը: Ցուցադրված բոլոր քանդակները Խաչատուր Իսկանդարյանը նվիրել է «Վալլեքս» խմբին, եւ դրանք մշտապես ցուցադրվելու են Ալավերդիում: Նկարիչը պատմեց, որ քանդակները պատկերում են հանքագործների իրական կերպարներ: Ցուցահանդեսից հետո դահլիճում տեղի ունեցավ նվերների ու պատվոգրերի հանձնումը: Բայց մինչ դրանք հանձնելը Լոռու փոխմարզպետ **Արսեն Դարբինյանը** շնորհավորեց բնակիչներին տոների կապակցությամբ: Առանձին խոսքով հանդես եկան նաեւ Ալավերդու քաղաքապետը, Վալերի Մեջլումյանը եւ ուրիշներ: Ապա քաղաքապետը պատվոգրեր, առողջարանային ուղեգրեր ու հեռուստացույցներ հանձնեց քաղաքի բնակիչներին:

Իսկ Գագիկ Արզումանյանն ու «Թեղուտ» ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ Ռուբեն Պարոնյանը հանձնեցին «Վալլեքս» խմբի նվերները «ACP» եւ «Թեղուտ» ընկերությունների աշխատակիցներին: Բոլոր ստացողների ու նվերների անունները հնչեցին առանձին-առանձին, յուրաքանչյուրն առանձին բարձրացավ բեմ ու ստացավ իր նվերը կամ պատվոգիրը, եւ դրանք հանձնելու «արարողությունը» տեւեց ավելի քան մեկ ժամ: «Արարողությունը» դարձել էր ձանձրալի անգամ նվերներ ստացողների համար: Լավ կլիներ՝ բեմից հրապարակվեր միայն նվերներ ստացողների թիվը, իսկ լավագույն դեպքում նաեւ ասվեր՝ ինչ նվերներ են տալիս:

«Վալլեքս» խմբի նախաձեռնությամբ 20 ուսանողներ էլ հնարավորություն կունենան տեսնելու Արեւմտյան Հայաստանը: Ուսանողների գերակշռող մասն ալավերդցիներ են:

«Վալլեքս» խմբի անակնկալները, սակայն, չէին ավարտվում այսքանով: Ալավերդու «Մետալուրգ» մարզադաշտում կազմակերպվել էր տոնական համերգ, որին հաջորդեց հրավառությունը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Հանգստի մեկնող հայերի 80 տոկոսը ապահովագրական պայմանագիր է կնքում

Ի տարբերություն նախորդ տարիների՝ այժմ զբոսաշրջիկներն ավելի գիտակցաբար ու պատասխանատու մոտեցում են ցուցաբերում ապահովագրությանն ու մինչ ճամփորդության կամ գործուղման մեկնելը համապատասխան ընկերությունների հետ բժշկական ապահովագրության պայմանագիր են կնքում:

Եթե ԱՊՀ երկրներ մեկնելու համար բժշկական ապահովագրությունն ըստ ցանկության է, ապա Շենգենյան երկրներ մուտք գործելու համար բժշկական ապահովագրությունը պարտադիր է: Շենգենյան գոտու երկրների համար մեկ օրվա արժեքն է 450 դրամ, ԱՄՆ-ի համար՝ 500 դրամ:

«Ինգո Արմենիա» ընկերության գործադիր տնօրենի առաջին տեղակալ **Արեւշատ Մելիքսեթյանի** փոխանցմամբ՝ հանգստի մեկնող ՀՀ



քաղաքացիների 80 տոկոսը համապատասխան պայմանագիր է կնքում: Ըստ վիճակագրության՝ միայն 10 տոկոսն է ստանում փոխհատուցում:

Հանկարծակի հիվանդություն, դժբախտ պատահար կամ մահ:

Միայն այս պարագայում ճամփորդական ապահովագիր կնքած զբոսաշրջիկը կստանա փոխհատուցում: Եթե ապահովագրական ընկերությունը հրաժարվում է փոխհատուցել, ապա ՀՀ քաղաքացին իրավունք ունի դատական կարգով պաշտպանելու իր իրավունքները:

«Քաղաքացիական օրենսգրքի մի շարք հոդվածները կարգավորում են վերոնշյալ խնդիրները», ասում է իրավաբան **Տարոն Սիմոնյանը**:

Նա նշում է, որ ապահովագրական ընկերությունները հաճախ հրաժարվում են տրամադրել փոխհատուցում՝ ասելով, որ զբոսաշրջիկը մեկնել է արտասահման ոչ թե ճամփորդության, այլ բուժման նպատակով: Եթե դատարանում ապացուցվում է, որ զբոսաշրջիկն իրավացի է, ապա, բացի փոխհատուցումից, ապահովագրական ընկերությունը պարտավորվում է հավելյալ գումար վճարել կրած վնասների համար:

2009-ին «Ինգո»-ի ծառայություններից օգտվել է 12.833 մարդ, 2010-ին նրանց թիվը կտրուկ աճել է՝ կազմելով 17.724 քաղաքացի:

Այս տարվա վեց ամսվա ընթացքում ճամփորդական ապահովագրությունից օգտվել է 7.530 մարդ:

«Եթե 2010-ին միջին հատուցման գումարի ծավալը կազմել է 175.000 դրամ, ապա մեկ հոգու առավելագույնը անցյալ տարի կազմել է 3.201.000 դրամ: Այս տարվա 6 ամսվա դրությամբ փոխհատուցման միջին թիվը կազմել է 465.000 դրամ, իսկ մեկ պատահարի դիմաց առավելագույնը վճարվել է 4.750.000 դրամ», ասաց Մելիքսեթյանը՝ հավելելով, որ ապահովագրական պայմանագիրն ազատում է զբոսաշրջիկին ավելորդ գլխացավանքից, եւ պատահարի դեպքում նա կարող է հենց տեղում, իրեն տրված քարտի հիման վրա, համապատասխան փոխհատուցում ստանալ:

Անդրադառնալով փոխհատուցումներին՝ Մելիքսեթյանն ասաց, որ անցյալ տարի փոխհատուցման պահանջ ներկայացրել է 150 քաղաքացի, բավարարվել է 138-ը: Այս տարվա առաջին վեց ամսվա ընթացքում ներկայացվել է 43 պահանջ. բոլորն էլ բավարարվել են:

«Մահվան դեպքում ապահովագրությունը կազմակերպում է, որ աճյունը տեղափոխվի Հայաստան», ասաց «Ինգո Արմենիայի» գործադիր տնօրենի առաջին տեղակալը՝ հավելելով, որ անցյալ տարի մահվան ելքով պատահար էր տեղի ունեցել Թուրքիայում, սակայն իրենք կարողացել են առանց խնդիրների լուծել:

Իրավաբանն էլ նշում է, որ հաճախ քաղաքացիները կեղծ տվյալներ են ներկայացնում, որպեսզի փոխհատուցում պահանջեն:

«Ինձ դիմած քաղաքացիներից միայն մեկի պարագայում էր, որ ապահովագրական ընկերությունը խախտել էր օրենքը: Դատական գործընթացից հետո ընկերությունը քաղաքացուն վճարեց փոխհատուցումը»:

«Ինգո Արմենիա» ընկերության գործադիր տնօրենի առաջին տեղակալը նշում է, որ Հայաստանում իրենց հանգիստը կազմակերպող հայերը հիմնականում չեն ապահովագրվում:

Հ. Հ.

# Մայրաքաղաքի հեղեղատարները պետք է կարգի բերվեն. հանձնարարել է քաղաքապետը

Մինչ քաղաքապետի ֆեյսբուքյան էջում բազմաթիվ քաղաքացիներ բողոքում են մերձքաղաքային երթուղիների վերջնականգառները Երեւան քաղաքի ավտոկայաններ տեղափոխելու որոշման դեմ ու պահանջում, որ իրենց վերաբերող հարցերում իրենց կարծիքն էլ հարցնեն կամ գոնե խնդիրը տարբեր տեսանկյուններից դիտարկեն եւ որոշում կայացնեն հօգուտ քաղաքացու, քաղաքապետ Կարեն Կարապետյանին հերթական աշխատանքային խորհրդակցության ժամանակ զեկուցել են, որ Արագածոտնի մարզից Երեւան եկող ուղեւորատար տրանսպորտային միջոցները արդեն կայանում են կենտրոնական ավտոկայանում:

Արարատի մարզից եկած ուղեւորատար տրանսպորտային միջոցները կայանում են երկաթգծի կայարանին հարակից Սեւանի փողոցի հատվածում հատկացված երթակարգավարական տարածքում:

Նախկին «Այրարատ» կինոթատրոնի հարեւանությամբ Գյումրի, Արթիկ, Ստեփանավան, Վանաձոր, Սպիտակ քաղաքներից եկող տրանսպորտային միջոցների վերջնականգառը կենտրոնական ավտոկայանն է:

Արմավիրի մարզից մայրաքաղաք եկող եւ նախկինում Սարյան փողոցում կայանող ուղեւորատար տրանսպորտային միջոցները սպասարկման ծառայություններն իրականացնում են կենտրոնական ավտոկայանից, իսկ մայրաքաղաքին մոտիկ հյուսիսային շրջաններից Երեւան եկող ուղեւորատար տրանսպորտային միջոցների վերջնականգառը հյուսիսային ավտոկայանն է:

Քաղաքապետը հանձնարարել է շարունակել հետեւողական վերահսկողությունը մայրաքաղաքի տրանսպորտային երթեւեկի բեռնաթափմանն ուղղված այս եւ մյուս միջոցառումների ուղղությամբ:

Մայրաքաղաքում տեղացած հորդառատ անձրեւների հետեւանքով քաղաքի որոշ հատվածներում երթեւեկության համար առաջացած դժվարանցանելիությունը վերացնելու եւ խնդիրը կանոնակարգելու նպատակով, պատասխանատու բոլոր կառույցներին քաղաքապետը հանձնարարել է քայլեր ձեռնարկել հեղեղատարները կարգի բերելու ուղղությամբ: Հանրային ծառայություններ մատուցող ընկերություններին Կարապետյանը հանձնարարել է բարեկարգել վթարների հետեւանքով քանդված փողոցները՝ լուրջ ուշադրություն դարձնելով ասֆալտապատման որակին:

Քաղաքապետարանը համատիրություններին, դպրոցներին ու նախադպրոցական ուսումնական հաստատություններին խոտհնձող ժամանակակից սարքավորումներ եւ կանաչապատման ու խնամքի այլ մեքենամեխանիզմներ է հատկացրել՝ Երեւանի կանաչ տարածքների ու սիզամարգերի խնամքը պատշաճորեն իրականացնելու նպատակով: Քաղաքապետի հանձնարարականով պետք է լուրջ ուշադրություն դարձնել կանաչ տարածքների խնամքին ու ոռոգման աշխատանքներին:

Հ. Հ.

# Պերճ Սեդրակյան. «Ջնջել ցեղասպանության պատճառած վնասները»

«Ես խորապես լիբանանցի եմ, կապված եմ այս հողին, որտեղ ծնվել եմ, մեծացել եւ ապրել, եւ Հայաստանն իմ ժառանգությունն է», ասում է **Պերճ Սեդրակյանը**, որը Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ, կենտրոնավայրը՝ Նյու Յորք) նախագահն է:

Օրերս Պերճ Սեդրակյանը Երեւան էր ժամանել մասնակցելու երկու կարեւոր հանդիպումների. մեկը Հայոց ցեղասպանության հարյուրամյակի հատուկ հանձնաժողովն է, մյուսը՝ «Հայաստան» հիմնադրամի կենտրոնական խորհրդի ամենամյա ժողովը:



Լիբանանում իրավաբանություն ուսանելուց եւ մի քանի տարի փաստաբան աշխատելուց հետո նա 1976-ին մեկնեց ԱՄՆ: Նյու Յորքի մեծ գրասենյակներից մեկում հանդիպեց լիբանանյան ծագումով մի փաստաբանի, որը գործընկերության առաջարկություն արեց: Ներկայումս նա աշխարհի 26 քաղաքում շուրջ 900 փաստաբան ունեցող միջազգային գրասենյակի անդամ է:

Լիբանանից մեկնած Սեդրակյանը պահպանել է կապը ընկերների հետ եւ կանոնավորապես վերադառնում է ծննդավայր, որտեղ դեռ ունի բնակարան: Միացյալ Նահանգներում նա աշխույժ գործունեություն է ծավալել Լիբանանի դատին ծառայող խմբերի հետ: ԱՄՆ մեկնելուց հետո Պերճ Սեդրակյանը նաեւ ընդգրկվեց ՀԲԸՄ խորհրդում (1906-ին հիմնված համահայկական կազմակերպությունը մասնաճյուղեր ունի 32 երկրի 80 քաղաքում), որի նախագահությունը ստանձնեց 2002-ին (փոխնախագահ լինելուց հետո):

Ի դեպ, նա Երեւան էր այցելել որպես ՀԲԸՄ նախագահ: Հայոց ցեղասպանության հարյուրամյակի հատուկ հանձնաժողովի նպատակն է աշխարհում կազմակերպել այդ հարյուրամյա տարելիցի հիշատակի միջոցառումներ: «Հայաստան» հիմնադրամի կենտրոնական խորհրդի ժողովը այս անգամ տարեկան հավաք է: Քանզի համահայկական հիմնադրամի առաքելությունն է ամեն տարի սփյուռքում միջոցներ հանգանակել Հայաստանում մեծ նախագծերի ֆինանսավորման համար:

### ՀԲԸՄ-ն եւ սփյուռքը

Ի՞նչ կարելի է ասել սփյուռքում ՀԲԸՄ-ի գործունեության մասին: Սեդրակյանը ներկայացրեց ՀԲԸՄ-ն, որ լիբանանցիներից շատերը ճանաչում են նրա բազմաբնույթ գործունեության շնորհիվ:

Նա բացատրում է. «Խումբը 1906-ին Կահիրեում Եգիպտոսի վարչապետի որդու՝ Պողոս Նուբար Փաշայի հիմնած ազգային կազմակերպության մասին է, որի գլխավոր առաքելությունն է պահպանել հայկական ինքնությունը սփյուռքում ու ազգային ունեցվածքը Հայաստանում: Նստավայրը Նյու Յորքում է: Կառավարվում է 21-հոգանոց վարչական խորհրդի կողմից:

Գրեթե 40 միլիոն դոլար տարեկան բյուջե ունեցող կազմակերպությունը ցեղասպանությունից հետո ձեռնամուխ եղավ առաջին հերթին հայերի մարդկային եւ կրթական կարիքների բավարարմանը:

Մեկդարյա պատմության եւ գործունեության ընթացքում ՀԲԸՄ-ն հարմարվեց հայ ժողովրդի պահանջմունքներին եւ աստիճանական զարգացում ապրեց, կարեւոր դեր խաղալով Հայաստանի պատմության մեջ, ցեղասպանությանը հաջորդած տարիներին Լիբանանում, Սիրիայում, Հունաստանում եւ այլուր հայ գաղթականների ճամբարների ֆինանսավորումից ու կազմակերպումից մինչեւ 30-50-ական թթ. դիսպանսերների, դպրոցների եւ պատանեկան ճամբարների ստեղծումը, իսկ 60-ականներից՝ սփյուռքի բոլոր գաղթօջախներում համայնքային եւ երիտասարդական կենտրոնների կառուցումն ու կազմակերպումը:

Հայաստանի վերանկախացումից եւ ԽՍՀՄ փլուզման հետեւանքով Արեւելյան Եվրոպայի երկրների վերաբացումից հետո առանձնակի ուշադրություն դարձվեց մայր հայրենիքում գործունեության ծավալմանը:

Այսօր ՀԲԸՄ-ն սփյուռքում ունի եւ կառավարում է 25 դպրոց եւ վարժարան, տասնյակ կիրակնօրյա դպրոցներ, երիտասարդական եւ մշակութային կենտրոններ: Օրինակ, Լիբանանում ՀԲԸՄ-ն ունի մի շարք կենտրոններ, որոնցից գլխավորը ներկայումս Անթիլիասի «Դեմիրճյան» կենտրոնն է, տարրական եւ միջնակարգ դպրոցներ, «Անդրանիկ» երիտասարդական միությունը իր բոլոր մարզական, մշակութային, երաժշտական, համալսարանական եւ մյուս գործունեություններով:

Կազմակերպությունը բարձրագույն կրթության ոլորտում համալսարանական կրթաթոշակներ է հատկացնում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով արվեստի եւ երաժշտության ասպարեզում տաղանդավոր երիտասարդներին»:

### Գործունեություն Հայաստանում

Հայաստանում ՀԲԸՄ ծավալած գործունեությունը երկրին գոյատեւելու հնարավորություն է տալիս ցեղասպանության ճանաչման հարցում Թուրքիայի ժխտողականության հարուցած քաղաքական խնդիրների պատճառով:

«Իր ստեղծումից ի վեր կազմակերպությունը մշտապես աջակցել է Հայաստանին՝ անկախ քաղաքական վարչակարգերից: Օրինակ, 1928-ին միությունը բժշկական կենտրոն հիմնեց Երեւանում: 1931-ին նա իր այն ժամանակվա նախագահի նվիրատվություններով հիմնեց Նուբարաշեն գյուղը, որն այսօր ունի 11 հազար բնակիչ: 1946-ին միությունը ֆինանսավորեց հազարավոր սփյուռքահայերի հայրենադարձությունը: 1971-ին ՀԲԸՄ նախագահ Ալեք Մանուկյանի միջոցներով իր անունը կրող գանձատուն ստեղծվեց Մայր Աթոռ Սբ Էջմիածնում:

Քաղաքականության մեջ ոչինչ մշտական չէ, վարչակարգերը հաջորդում են իրար, բայց ազգային ունեցվածքը մնում է:

Անկախության տարիներին մեր գործունեությունն էլ ավելի բազմազան դարձավ, եւ կազմակերպությունը ավելի քան 150 մլն դոլար ներդրեց Հայաստանի տարբեր նախագծերում: Կոմունիզմի անկումից հետո ՀԲԸՄ-ն մի կողմից ֆինանսավորեց Հայաստանի Ամերիկյան համալսարանի ստեղծումը, որպեսզի երիտասարդները ծանոթանան Արեւմուտքի կրթական համակարգին: Մյուս կողմից, մենք կրթաթոշակներ ենք տալիս Հայաստանի Ֆրանսիական համալսարանին եւ օժանդակում ենք պետհամալսարանին: Միությունը ստանձնել է Երեւանի ֆիլհարմոնիկ նվագախմբի ծախսերը եւ ֆինանսավորել արվեստի ու երաժշտության բազմաթիվ ձեռնարկումներ, որպեսզի պահպանվի անցյալի գեղարվեստական եւ մշակութային ժառանգությունը, որ մեր երիտասարդ պետությունը դեռ ի վիճակի չէ անել:

Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հետ համագործակցելով՝ միությունը ստանձնեց խորհրդային ժամանակաշրջանի պիոներական պալատների ծախսերը եւ դրանք դարձրեց մանուկների ու պատանիների գեղարվեստական ու մշակութային կենտրոններ: 1990-ից ի վեր այդ կենտրոնները ընդունում են օրական մոտ 4000 պատանիների, ապահովելով հետաքրքրական ժամանցի միջոցներ»:

Այդ երիտասարդներն իրենց ասպարեզներում հասնում են տպավորիչ հաջողությունների: Նրանցից շատերն աչքի են ընկնում արդեն մանկական եւ պատանեկան տարիներին: Բարեգործները լավ են ըմբռնել իրենց ձեռնարկման նպատակները:

«ՀԲԸՄ-ն զբաղվում է «օգնության սեղաններով», որոնցից ամեն օր սնվում են ավելի քան 1500 կարիքավոր թոշակառուներ,- շարունակում է Պերճ Սեդրակյանը:- Ի դեպ, մենք ջանքեր ենք գործադրում զարգացնելու Առաքելական եկեղեցու գործունեությունը, մեր անդամների նվիրատվություններով ֆինանսավորելով նոր եկեղեցիների կառուցումը եւ կոմունիզմի 80 տարիներից հետո զարգացնելով ծխական հայեցակարգը: Մենք մի նոր ճեմարան ենք ստեղծել Սեւանում:

Այսպիսով մենք Ն. Ս. Գարեգին Բ-ին օգնում ենք «Եկեղեցու» վերակառուցման նրա առաքելության մեջ՝ ապահովելով ճեմարանականների պատրաստման ֆինանսավորումը արտերկրում աստվածաբանական եւ այլ ուսմանց կրթաթոշակների միջոցով: Մենք համոզված ենք, որ Եկեղեցին կշարունակի շատ կարեւոր դեր խաղալ սփյուռքում մեր ինքնության պահպանման գործում:

ՀԲԸՄ-ն Հայաստանում ամեն ամառ կազմակերպում է «Սկաուտական» բանակումներ, ավելի քան 500 պատանի սփյուռքահայերի ճամբարներ եւ այցելություններ: Մենք Վիրտուալ համալսարան ենք ստեղծել համացանցի միջոցով սփյուռքահայերին լեզու, պատմություն, արվեստ դասավանդելու համար»:

Սեդրակյանն ընդգծում է, որ ՀԲԸՄ-ն ջանքերը կենտրոնացնում է Հայաստանի վրա, քանզի դժվար է ինքնությունը պահպանել սփյուռքում՝ չներշնչվելով մայր հայրենիքից եւ Եկեղեցուց:

«Կոմունիզմի անկումից հետո մենք գործունեությունը վերսկսել ենք արեւելաեվրոպական երկրներում (Բուլղարիա, Ռումինիա եւ այլն) եւ գործունեություն ենք ծավալում Ռուսաստանում, որտեղ երկու միլիոն հայ է ապրում», շարունակում է Սեդրակյանը:

«Ցավոք, մեր միջոցները դեռ սահմանափակ են գաղթավայրերի ներկայիս պահանջմունքների դեմ հանդիման», վերջում արձանագրում է նա:

**«L'Orient-Le Four», Բեյրութ**

**Ֆրանս. թարգմ. Պ. Ք.**

# Ո՞վ եք, ի՞նչ եք ուզում, ի՞նչ իրավունքով

Մի պահ պատկերացնենք, որ մեր՝ հայաստանյան հասարակությունում առաջանում է հայ երիտասարդների մի բավականին մեծ խումբ, որոնք «ցանկանում են դարձնել աշխարհը ավելի լավը, որոնք պատրաստ են զոհողությունների՝ հանուն իրենց ընկերների, որոնք պատրաստ են անհապաղ օգնության հասնել մերձավորին: Որոնք սիրում են էքստրեմալ հանգիստը (մանավանդ Հայաստանի լեռնային պայմաններում-Հ. Ա.), որոնք կարողանում են լսել եւ հասկանալ ուրիշներին, որոնք մշտապես դրական տրամադրվածություն ունեն, կարողանում են ժպտալ եւ հավատում են, որ Աստծու օգնությամբ կարող են փոխել այս աշխարհը, եւ որոնք թիմ են»: Դե հիմա պատկերացրեք, որ Հայաստանում նման «թիմ» կա, անունը, ինչպես ամբողջ աշխարհում նույնն է՝ Young life («Յանգ լայֆ»):

Կազմակերպության «հայաստանյան մասնաճյուղը» այս օրերին ամառային ճամբար է կազմակերպել Ծաղկաձորում. այսօր շուրջ 200 երեխաներ իրենց հանգիստն են վայելում՝ «Յանգ լայֆ»-ի հովանու ներքո: Անցյալ շաբաթ վերջին՝ նույն հանգստավայրում եղած Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի ներկայացուցիչները նույն ճամբարում ականատես են եղել մի շարք «տարօրինակ երեւույթների». երեխաները արտասվելիս են եղել, նրանցից մեկը անգամ նշել է, թե ցանկանում է լքել ճամբարը, ու «եթե Աստված ինձ դրա համար պիտի պատժի, թող պատժի»: «**Ազգ**»-ի հետ զրույցում իրադարձությանն ականատես ՀՀԿ ԵԿԱ փոխնախագահ Մարիամ Մարտիրոսյանն ու ներկայացուցիչ Գոհար Գալսագազյանը վկայում են, որ, լսելով «կրոնական բնույթի ռիթմիկ երգերի ձայներ, իրենք մտել են հանգստավայրի դահլիճ, որտեղ ականատես են եղել, թե ինչպես են երեխաները միմյանց գրկած, երգում Հիսուսի մասին երգեր, ինչպես են անհայտ պատճառներով արտասվում»: Ասոցիացիայի ներկայացուցիչները փորձել են պարզել երեխաների արտասվելու պատճառները «Յանգ լայֆ»-ի ներկայացուցիչներից, որոնք պատասխանել են. «Դրանք դրանով գտնում են Հիսուսին» կամ՝ «Շատերը նրանցից իրենց ընտանիքներում ճնշված են ու սոված, իսկ այստեղ մենք նրանց կերակրում ենք, դրա համար երեխաները հուզմունքից լաց են լինում»:

«Յանգ լայֆ» կազմակերպությունը Հայաստանում հիմնել է ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի հոգեբան շրջանավարտ **Լիլիթն** իր ամուսնու հետ. «Ես հանդիպեցի Հիսուսին, երբ 14 տարեկան էի: Սակայն ծնողներս թույլ չէին տալիս գնալ եկեղեցի, եւ ես Հիսուսին խնդրեցի՝ օգնել ինձ, եւ մենք հաղթեցինք, ու նա (նկատի ունի Հիսուսին-Հ. Ա.) իմ ընկերն է արդեն շատ տարիներ», այսպես պատմել է իր մասին Լիլիթը: «Յանգ լայֆ»-ը Հայաստանում», ըստ կազմակերպության «ծրագրերի համակարգող» Արամի, գրանցված է որպես հասարակական կազմակերպություն, սակայն Հայաստանի հասարակական կազմակերպությունների էլեկտրոնային կայքէջում մենք նման անվանումով կազմակերպություն չգտանք: Բացի սրանից, «Յանգ լայֆ»-ի ներկայացուցիչ **Արամի** խոսքերով՝ իրենք իրականացնում են «երիտասարդական ծրագրեր՝ ինչպես սպորտային, այնպես էլ ժամանցային: Մասնավորապես կազմակերպությունն ունի իր ուրախների եւ հնարամիտների ակումբը՝ հենց «Յանգ լայֆ» անվանումով: Բացի սրանից, Արամի խոսքերով, իրենց կազմակերպած ճամբարների ժամանակ իրենք 7-16 տարեկան երեխաների հետ «զրուցում են քրիստոնեության, Հիսուսի մասին. «Ես Հիսուսին հայտնաբերեցի 4 տարի առաջ», «**Ազգ**»-ի հետ հեռախոսազրույցում ասաց Արամը՝ ներկայանալով որպես Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ: Սակայն 2001-ի դեկտեմբերի 4-ին ընդունված ՀՀ հասարակական կազմակերպությունների մասին օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետը սահմանում է. «Սույն օրենքը չի տարածվում կրոնական կազմակերպությունների, կուսակցությունների, արհեստակցական միությունների ...ձեւերի ու տեսակների մեջ»: Հետեւաբար՝ հասարակական կազմակերպությունը չի կարող իրականացնել «քրիստոնեության մասին զրույցներ», առավել եւս՝ «օգնել երեխաներին եւ պատանիներին՝ բացահայտելու Հիսուսին»: Արամը, սակայն, մեր զրույցում չընդունեց, որ իրենք զբաղված են քարոզով՝ որպես այդպիսին. «Մենք պարզապես զրուցում ենք, արտահայտում մեր պատկերացումները, դրանք փոխանցում երեխաներին», ասաց նա՝ հավելելով, որ վերջերս ճամբարի բոլոր երեխաներին տարել են Կեչառիսի եկեղեցի:

Ծաղկաձորի նույն հանգստավայր ՀՀԿ ԵԿԱ-ի խնդրանքով եկած Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչ տեր **Շահեն քահանան** «**Ազգ**»-ի հետ հեռախոսազրույցում նշեց, որ ինքը ճամբարում «տեսել է յուրահատուկ կարմիր վերնաշապիկներով երիտասարդների, որոնց շապիկների վրա պատկերված են եղել խաչեր». «Սակայն որոշ ժամանակ անց, երբ ես ցանկանում էի զրուցել այդ երիտասարդների հետ, նրանց այլեւս չտեսա»: Տեր Շահենը անձամբ չի տեսել նաեւ «արտասվող երեխաների», սակայն «տարօրինակ երեւույթների» տեղի ունենալը ճամբարում քահանան չհերքեց:

Մեր հարցին, թե գիտե՞ն արդյոք ճամբարում հանգստացող երեխաների ծնողները, որ իրենց երեխաների հետ, բացի սովորական ճամբարային կյանքից, պետք է տարվեն նաեւ «զրույցներ Հիսուսի մասին», «Յանգ լայֆ»-ի ներկայացուցիչ Արամը պատասխանեց. «Իհարկե գիտեն»: Սակայն այդ պարագայում տարօրինակ է երեխաների լացը. չէ՞ որ եթե նրանք կանխավ տեղեկացված են, թե ուր եւ ինչու են մեկնում, ապա նման հուզումներ չեն կարող լինել, եթե, իհարկե, նման զրույցների ժամանակ չեն լինում երեխային սարսափեցնող երեւույթներ, մասնավորապես «Հիսուսի արյան ցուցադրությունը» ինչ-որ կարմիր նյութերի տեսքով, ինչը երեխայի հետ շփման լավագույն ձեւը չէ: Ի դեպ, եթե անգամ ընդունենք, որ «Յանգ լայֆ»-ը Հայաստանում գրանցված կրոնական կազմակերպություն է, ինչը չի հաստատում ներկայացուցիչ Արամը, ապա համաձայն վերջիններիս մասին ՀՀ օրենքի՝ հոգեորսությունը, այսինքն՝ սեփական կրոնական հայացքների բռնի կամ ստիպողաբար պարտադրումը պատժելի արարք է: Ու եթե մենք խոսում ենք հասկապես անչափահաս երեխաների մասին, ապա դա կրկնակի անթույլատրելի է դառնում:

Ինչեւէ, «**Ազգ**»-ը առաջիկայում հետամուտ կլինի այս խնդրին՝ ներկայացնելով բոլոր կողմերի, այդ թվում՝ ճամբարում հանգստացող երեխաների ու նրանց ծնողների կարծիքը՝ պարզելու՝ ո՞վ կամ ովքե՞ր են «Յանգ լայֆ» կազմակերպությունը», ի՞նչ նպատակներ ունեն եւ ունե՞ն արդյոք իրավասություն ու բարոյական իրավունք՝ հավաքելու միանգամից շուրջ 200 երեխաների ու «զրուցելու Հիսուսի մասին»: Ի դեպ, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդին հենց Ծաղկաձորում ՀՀԿ ԵԿԱ-ի ներկայացուցիչներն տեղեկացրել են խնդրի մասին, Վեհափառը համապատասխան հանձնարարականներ է տվել Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել սրբազանին եւ երաշխավորել, որ «խնդրի առնչությամբ առաքելական եկեղեցին տանում է քննություն»:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿ

# Հիմա էլ՝ հեպատի՞տը

Դեռ չի լռել զորամասերից մեկի սպաների՝ Իլհամ Ալիեւին հղած «տեսադիմումի» աղմուկը: Պաշտպանության նախարարությունը ոչ մի կերպ չի մեկնաբանում հանգամանքը, թե ինչո՞ւ ավերված զորանոցային տանիքի վերանորոգման համար սպաներն են ստիպված եղել տնտեսական ապրանքների խանութում գրավ դնել իրենց աշխատավարձի քարտերն ու կատարել վերանորոգման աշխատանքներ: Իհարկե, անհնար է հասարակությանը խելքը գլխին բացատրություն տալ:

Չէ՞ որ Ադրբեջանը շուրջ 3 միլիարդ դոլարի ռազմական բյուջե ունի, բայց, բանից պարզվում է, բանակի կարիքներն իրականում հոգում են սպաները՝ իրենց աշխատավարձի հաշվին: Դա էլ իր հերթին նրանց դրդում է զինվորների ծնողներից կաշառք ստանալ: Այլ կերպ նրանք չեն կարող ընտանիք կերակրել: Իսկ որ ադրբեջանական բանակում վիճակն իրոք խայտառակ է, այդ մասին կողմնակի վկայում է «Պոլիգոն» վերլուծական կենտրոնի ունեցած տեղեկությունը:

Ըստ այդմ, բանակում խիստ տարածում է գտել վիրուսային հեպատիտը: Անունը հրապարակել չցանկացած մի կին, որի որդին նույնպես տառապում է C հեպատիտով, լրատվամիջոցին տեղեկացրել է, որ Բաքվի կենտրոնական զինվորական հոսպիտալում այդ կարգի շուրջ 50 հիվանդ կա: Նա ասել է, որ որդուն «կատարելապես առողջ» է բանակ ուղարկել, բայց այնտեղ «10-15 հոգի նույն «հիգիենիկ» պարագաներն են միաժամանակ օգտագործում»:

Կնոջ ասելով, հիվանդության պատճառը բանակում տիրող համատարած կեղտոտությունն է: Կինը պատմել է, որ որդու բուժման համար հարկավոր են «թանկ արժեցող հակաբիոտիկներ», որոնք, սակայն, նա գնել չի կարող: Այդ իսկ պատճառով դիմել է Իլհամ Ալիեւին եւ պաշտպանության նախարարին, որից հետո որդու հանդեպ «սկսել են բռնություններ գործադրել, սպառնում են նրա դեմ քրեական գործ հարուցել՝ իբր ծեծել է մի զինվորի»:

«Պոլիգոն»-ը փորձել է ճշտել ստացված տեղեկությունը: Բաքվի կենտրոնական զինվորական հոսպիտալի անցակետում ասել են, որ այնտեղ «լրագրողների մուտքն արգելված է»: Հոսպիտալի հրամանատարության հետ հեռախոսակապ հաստատել նույնպես չի հաջողվել: Լրատվամիջոցի աշխատակիցներից մեկի ծանոթուհին, որը բուժքույր է հոսպիտալում, ասել է, որ իրենց մոտ իրոք հեպատիտով հիվանդ զինվորներ կան, որոնք տեղափոխվել են «ճակատային զորամասերից»:

Այս, ինչպես նաեւ այս տարվա փետրվարին զորամասերից մեկում 7 զինվորի սպանության գործով դատավարության վերաբերյալ տեղեկատվությունների ֆոնին վերստին ադրբեջանական մամուլում աշխուժացել է Սաֆար Աբիեւի հավանական պաշտոնանկության թեման:

Անհավանական է, սակայն, որ ներկա իրավիճակում Իլհամ Ալիեւը հաջողություն ունենա հեռացնելու Աբիեւին, քանի որ վերջինս ոչ միայն ազդեցիկ կապեր, այլեւ լուրջ ֆինանսական միջոցների է տիրապետում եւ հնարավորություն ունի ներքին լարվածություն հրահրել: Բացառված չէ, որ դարաբաղյան կարգավորման բանակցություններում Իլհամ Ալիեւի երկդիմի կեցվածքը մեծ մասով պայմանավորված է նրանով, որ նա, չնայած անսահմանափակ իշխանություն ունի սահմանադրությամբ, իրականում չի վերահսկում իր շրջապատի ազդեցիկ պաշտոնյաներին: Դրա մի ապացույց էլ կարելի է համարել այն, որ Իլհամ Ալիեւը վերջերս պետական բարձրագույն պարգեւ շնորհեց ԱԻ նախարար Քյամալեդդին Հեյդարովին, որին փորձագետները համարում են Ադրբեջանի ամենակոռումպացված պաշտոնյան:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Տուժողը բացահայտեց

*1-ին էջից*

Էլնարա Շախմալիեւան ասում է, որ ինքը կռացել էր, որ «արկղից սպասք վերցնի»: Այդ ո՞ր օրվանից են Հարավային Կովկասի ամենահարուստ երկրում՝ Ադրբեջանում, մարդիկ սպասքն արկղերի մեջ պահում: Չէ՞ որ հիմա 21-րդ դարն է եւ բացառված է, որ Սանկտ Պետերբուրգից հյուրեր ընդունող Ջաֆարովների ընտանիքը ճաշի սպասքը պահեր ոչ թե գոնե սնդուկում, այլ՝ արկղում:

Երկրորդ, Էլնարա Շախմալիեւան չի պատմում, որ աղջկան տեսել է հատակին: Նա հստակ ասում է՝ «իմ աղջկան տեսա գետնին»: Ռուսերեն տարբերակում ասված է՝ «на земле»:

Երրորդ, դեպքից հետո նա վազել է ոչ թե «փողոց», այլ՝ «դեպի ճանապարհը»:

Համադրելով Էլնարա Շախմալիեւայի հարցազրույցի այդ խիստ կարեւոր դրվագներում ասվածը, վստահաբար կարող ենք ասել, որ Այգյուն Շախմալիեւան զոհվել է ոչ թե Ջաֆարովների տանը՝ ճաշասեղանի մոտ, այլ՝ ինչ-որ այլ վայրում: Գուցե՝ Թովուզ գետի ափին, որտեղ, հավանաբար, հյուրընկալները զբոսախնջույք էին կազմակերպել: Այդ դեպքում նրանք կարող էին հարկավոր սպասքը վերցնել արկղում, Այգյունը կընկներ ոչ թե հատակին, այլ՝ գետնին, մայրն էլ ոչ թե փողոց, այլ դեպի ճանապարհը կվազեր:

Իսկ թե ինչի՞ց է զոհվել Այգյունը, կարելի է ենթադրել նրանից, որ նրա մայրն իր վերքի պատճառ համարում է «գնդակը»: Ամենայն հավանականությամբ, խոսքը հրացանի կրակոցից արձակված «գնդակի» մասին է: Հակառակ դեպքում նա կօգտագործեր «բեկոր» բառը: Հարցազրույցի այդ հատվածն ռուսերեն հնչում է այսպես. «Не знала, что и меня задела пуля»:

Հատկանշական է, որ Թովուզի շրջանային հիվանդանոցի հերթապահ բժիշկ Մամեդովը նույնպես Էլնարա Շախմալիեւայի՝ «ազդրի աջ շրջանում ստացած վերքի» պատճառ առաջինը համարել է «հրազենային կրակոցը»: Չպետք է բացառել, որ հենց այս «վրիպումն» է պատճառ հանդիսացել, որ Էլնարա Շախմալիեւան Թովուզից տեղափոխվի Բաքու: Հավանաբար՝ որպեսզի տեղի բժիշկները Մամեդովի «սխալը չտեսնեն»:

Ո՞վ է զբոսախնջույքի ժամանակ զենքի հետ անզգույշ վարվել: Այգյուն Շախմալիեւա՞ն: Հազիվ թե: Հավանականն այն է, որ զենքը կրակել է Ջաֆարովների 16- ամյա որդու՝ Էլսեւարի ձեռքին: Կրակոցն Այգյունի համար ճակատագրական է եղել: Իսկ մայրը փրկվել է, որովհետեւ այդ պահին կռացած էր, ինչի շնորհիվ էլ կենսական կարեւոր օրգանները չեն խոցվել: Գնդակը նրան վերք է պատճառել ազդրի շրջանում: Դա միանգամայն բնական է, քանի որ, կրկնենք, կրակոցի պահին նա արկղից սպասք հանելու համար կռացած է եղել:

Ասվածի օգտին է խոսում նաեւ այն, որ Էլնարա Շախմալիեւան խոսում է «իրեն պատած ծխի» մասին: Ամեն ոք գիտի, որ ծուխ առաջանում է վառոդի բռնկումից: Իսկ պայթուցիչ սարքերն «աշխատում են» չոր հրապատիճի գործադրմամբ՝ գրեթե անծուխ: Այսքանից հետո ինչպե՞ս չասենք, որ իլհամալիեւյան քարոզչամեքենան կատարելապես հիմար կեղծարար է: Միակ բանը, որ նա կարող է այսուհետեւ անել, որպեսզի խնայած լինի «գերագույն գլխավոր հրամանատարին», լռելն է:

# Սկոտլանդ-Յարդի պետը լքեց պաշտոնը թերթի սկանդալի պատճառով

Մեծ Բրիտանիայի ոստիկանության՝ Սկոտլանդ-Յարդի պետ սըր Պոլ Սթիվենսոնը հրաժարական է տվել News of the World թերթի հետ կապված սկանդալի պատճառով: Այդ մասին հաղորդվում է գերատեսչության կայքի մամլո տեղեկագրում:



2009-ից Սկոտլանդ-Յարդը ղեկավարած Պոլ Սթիվենսոնի խոսքերով՝ պաշտոնաթողության հիմնական պատճառը շրջանառվող լուրերն են իր գերատեսչության ենթակա թերթի հետ կապերի մասին, որի լրագրողներն ամբաստանվում են հեռախոսազրույցների անօրինական գաղտնալսումների մեջ:

Սկանդալի պատճառով Սթիվենսոնին քննադատում էին, որ 2009-ին նա հանրության հետ կապերի գծով խորհրդականի պաշտոնում աշխատանքի է ընդունել News of the World-ի աշխատակից Նիլ Ուոլիսին, մեղսակից լինելու կասկածանքով: Բացի դրանից, հանրության դժգոհությունն է հարուցել այն փաստը, որ 2010-ին Սթիվենսոնը բուժվել է այն առողջարանում, որտեղ աշխատում էր Ուոլիսը:

Լոնդոնի քաղաքապետ Բորիս Ջոնսոնը «Սքայ նյուզ» հեռուստաընկերության եթերում Սթիվենսոնի հրաժարականի կապակցությամբ հայտարարել է, որ դա իրեն տխրեցնում է, եւ վստահություն է հայտնել, որ անձամբ Սթիվենսոնի ազնվությունը անկարելի է կասկածի տակ առնել:

News of the World թերթի աշխատակիցների գործունեության հրապարակային քննությունը Մեծ Բրիտանիայում սկսվեց հուլիսի 8-ին: Ներկայումս ոստիկանական քննություն է կատարվում անօրինական գաղտնալսման փաստի եւ ոստիկաններին կաշառքներ տալու կասկածների առնչությամբ: Գործի շրջանակներում արդեն ձերբակալված է 10 մարդ:

News of the World-ը վերահսկող News Corporation-ի սեփականատեր Ռուպերտ Մերդոկը սկանդալի պատճառով որոշել է փակել թերթը:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

# «Հզբոլլահը» Իսրայելին «թույլ չի տա» նավթ որոնել վիճելի ջրատարածքում

## «Ազատության նավատորմիղի» միակ նավը մեկնել է Գազա

Լիբանանցի շիա արմատականների «Հզբոլլահ» կազմակերպությունը սպառնում է Իսրայելին եւ պահանջում է երկրաբանական հետախուզում չանցկացնել Միջերկրական ծովի ծանծաղուտի այն շրջանում, որը Լիբանանը վիճելի է համարում:

«Հզբոլլահի» ներկայացուցիչ Մուհամմադ Ռաադը ընդգծել է, որ Իսրայելը «իրավունք չունի նավթահորեր փորել վիճելի տարածքներում»: Այդ մասին հաղորդում է newsru.co.il կայքը:

Անցյալ շաբաթ «Հզբոլլահի» առաջնորդի տեղակալ շեյխ Նաիմ Քասեմը հայտարարեց, որ կազմակերպությունը Իսրայելին թույլ չի տա զավթել նավթի ու գազի այն հանքավայրերը, որոնք ենթադրաբար գտնվում են Լիբանանի տնտեսական գոտու սահմաններում:

Լիբանանի ղեկավարությունը վստահ է, որ Իսրայելը յուրացրել է Լիբանանի տնտեսական ջրատարածքի 3 տոկոսը, որը պարտավոր է վերադարձնել:

Իսրայելի կառավարությունը սահմաններն արդարացի է համարում: Տվյալ դեպքում Իսրայելն ու Լիբանանը որեւէ համաձայնագիր չեն կնքել, եւ սահմանները որոշված են իսրայելա-կիպրական եւ լիբանանա-կիպրական համաձայնագրերով:

Վիճելի տարածքում առայժմ օգտակար հանածոների հանքավայրեր չեն հայտնաբերվել: Իսրայելական ընկերությունների հայտնաբերած բնական գազի «Թամար» եւ «Լեւիաթան» խոշոր հանքաշերտերը գտնվում են այդ տարածքից զգալիորեն հեռու: Սակայն Միջերկրական ծովի ծանծաղուտում նավթի ու գազի որոնման աշխատանքներ կատարվում են նաեւ վիճելի տարածքի անմիջական մոտակայքում ու ներսում:

Ինչ վերաբերում է Գազայի հատվածի ծովային շրջափակումը վերացնելու նպատակով «Ազատության նավատորմիղ» ուղարկելուն, Հունաստանի իշխանությունները տասը նավերից միայն մեկին են թույլատրել ծով դուրս գալ: Խոսքը ֆրանսիական Dignity զբոսանավի մասին է, որը հուլիսի 17-ից շարժվում է դեպի Գազայի հատված: Այդ մասին հայտարարել են մարդասիրական ձեռնարկման կազմակերպիչները:

Նախնական տեղեկությունների համաձայն, նավում կան 16 պաղեստինամետ ակտիվիստներ, որոնց թվում է նախկին իսրայելցի Դրոր Ֆայլերը:

Ուղեւորուհիներից մեկը «Վաշինգտոն փոստ» թերթին ասել է, որ ուղեւորությունը բացառապես քաղաքական բնույթ է ստացել: Ըստ երեւույթին, նավը չի կարողացել զգալի քանակությամբ մարդասիրական բեռներ վերցնել:

Իսրայելցի զինվորականները քանիցս ասել են, որ Գազան ծովային շրջափակման մեջ է, ուստի պաղեստինցիներին մարդասիրական օգնություն ուղարկողները կարող են դա անել իսրայելական կամ եգիպտական նավահանգիստների միջոցով:

Պ. Ք.

# Սպանվել է Կարզայի մերձավորագույն խորհրդականը

## Ջոն Ալլենը փոխարինեց Դեւիդ Պետրեուսին

Քաբուլում իր տանը սպանվել է նախագահ Համիդ Կարզայի մերձավորագույն խորհրդական Ջան Մոհամմեդ Խանը, ինչպես նաեւ նրան հյուրընկալված պատգամավոր Մոհամմեդ Հաշեմ Վաթանվալը: BBC-ի տվյալներով, խորհրդականի տուն ներխուժած հինգ անձինք սպանել են թիկնապահներին, ապա՝ տանտիրոջը եւ նրա հյուրին:



Ջան Մոհամմեդ Խանն անցյալում Ուրուզգանի նահանգապետն էր: Ենթադրվում է, որ սպանությունը կազմակերպել են թալիբները: Օրերս նրանք կազմակերպել էին նաեւ նախագահի խորթ եղբայր Ահմադ Վալի Կարզայի սպանությունը:

Միաժամանակ հաղորդվում է, որ հուլիսի 17-ին ՆԱՏՕ-ի ուժերը Աֆղանստանի անվտանգության ծառայություններին են փոխանցել Բամիանի նահանգի վերահսկողությունը, իսկ հուլիսի 18-ին Աֆղանստանում փոխվել է ՆԱՏՕ-ի կոալիցիոն ուժերի հրամանատարը. գեներալ Դեւիդ Պետրեուսին փոխարինել է գեներալ Ջոն Ալլենը: Ֆրանսպրես գործակալությունը հաղորդում է, որ մինչեւ վերջերս Ալլենը ԱՄՆ զինված ուժերի Կենտրոնական հրամանատարության պետի տեղակալն էր, իսկ դրանից առաջ ծառայել էր Իրաքում:

58-ամյա Դեւիդ Պետրուսը կգլխավորի ԿՀՎ-ն, որի տնօրեն Լեոն Պանետտան արդեն ստանձնել է Պենտագոնի ղեկավարի պարտականությունները:

Պ. Ք.

# Եգիպտոսում կազմվեց նոր կառավարություն

Եգիպտոսի վարչապետ Էսսամ Շարաֆը հայտարարել է 12 նոր նախարարների նշանակման մասին: Երկրի պետական հեռուստատեսության հաղորդումները վկայակոչելով՝ Ասոշիեյթեդ պրես գործակալությունը ընդգծում է, որ կառավարության նախկին անդամների հրաժարականները եւ նոր նախարարների նշանակումները տեղի ունեցան հասարակայնության ճնշման ներքո:

Հուլիսի սկզբից Կահիրեի Թահրիր հրապարակում անցկացվում են անժամկետ բազմամարդ ցույցեր, որոնց մասնակիցները պահանջում են առավել ակտիվորեն իրականացնել նախագահ Մուբարաքի վարչակարգի տապալումից հետո խոստացված բարեփոխումները:

Պաշտոնաթող արված նախարարների մեջ առավել հայտնի անձնավորությունը հնությունների գործերի նախարար Զահի Հավասն է, որը համարվում է աշխարհի առաջատար հնագետներից մեկը: Մուբարաքի կառավարությունում նախարարի պաշտոն զբաղեցրած Հավասը նրա տապալումից հետո դատապարտվեց 1 տարվա բանտարկության, բայց ավելի ուշ վերին ատյանի դատարանը չեղյալ հայտարարեց դատավճիռը:

Նորանշանակ նախարարների մեծամասնությունը նոր մարդիկ են Եգիպտոսի քաղաքական կյանքում, այսինքն կապված չեն Մուբարաքի վարչակարգի հետ:

Չնայած կառավարության կազմի փոփոխությանը, բողոքավոր ցուցարարներից շատերը հայտարարում են, որ մտադիր են մնալ Թահրիր հրապարակում, մինչեւ որ կատարվեն իրենց բոլոր պահանջները: Ցուցարարները մասնավորապես պահանջում են Մուբարաքի եւ նրա մերձավորների շուտափույթ դատավարություն, զինվորական դատարաններում քաղաքացիական գործերի քննության արգելում, ինչպես նաեւ նվազագույն աշխատավարձի բարձրացում:

Անցած շաբաթը նշանավորվեց «Ոսկե ծիրան» 8-րդ միջազգային կինոփառատոնով: Վիվասել-ՄՏՍ ընկերության (գլխ. հովանավոր) եւ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ կազմակերպված «Ոսկե ծիրան» կինոփառատոնն այս տարի ներկայացավ նոր անակնկալներով եւ մասնակից երկրների ընդլայնված աշխարհագրությամբ՝ կինոարվեստի սիրահարների առջեւ բացելով երեւակայության եւ իրականության միջեւ թռիչքի սահմանները: Փառատոնին ուղարկված 631 հայտից ընտրվել էր շուրջ 150 ֆիլմ, որոնցից 67-ը մրցում էին միջազգային 4 մրցույթներում: «Փառատոնին, ինչպես ասաց հիմնադիր տնօրեն, կինոռեժիսոր **Հարություն Խաչատրյանը**, աշխարհի տարբեր երկրներից մասնակցում էին 150 կինոաշխարհի մարդիկ, իսկ մեկ շաբաթվա ընթացքում բոլոր սրահներում փառատոնի ֆիլմերը դիտել են շուրջ 37.000 կինոսիրող»: Ավելացնենք, որ ամեն օր Ազնավուրի հրապարակում 19.00-24.00 հանդես էին գալիս ջազային տարբեր խմբեր, անհատ կատարողներ ու երգիչներ: Եվ ինչպես ժողովուրդն է ասում՝ «ասեղ գցելու տեղ չկար»: Նույնն էր նաեւ կինոսրահներում: Եվ այդ ամենը նկատելով, վարչապետ Տիգրան Սարգսյանը եւ քաղաքապետ Կարեն Կարապետյանը խոստացան, որ փառատոնը այսուհետեւ կունենա իր կինոկենտրոնը՝ կինոսրահներով ու դահլիճներով: Հուսանք, որ այդ խոստումները 9-րդ փառատոնին իրականացված կտեսնենք:

Միջազգային ժյուրիների 6 խմբերն ամփոփել էին իրենց արդյունքները եւ հաղթողներին մրցանակները հանձնվեցին «Լաթար» հյուրանոցային համալիրի բացօթյա հարթակում: Չնայած անձրեւին, այդ հանդիսավոր արարողությանը մասնակցող շուրջ 300 մարդկանց փառատոնի տնօրենությունը բաժանել էր անձրեւանոցներ: Երբ անձրեւը մեղմացավ, կարծես հրաշք տեղի ունեցավ՝ միանգամից պարզ ու արեւի շողերով գունազարդված հառնեց Արարատ սարն իր ձյունածածկ գագաթով: Ներկաները զմայլվում էին ու հիանում, որովհետեւ մեկ շաբաթվա ընթացքում նրանց բախտ չէր վիճակվել Արարատն այդպես պարզ տեսնել: Փառատոնի կոչնակի ազդարարմամբ, հանդիսավար Սերժ Ավետիքյանը բեմ հրավիրեց «Միջազգային խաղարկային ֆիլմերի» մրցույթի ժյուրիի նախագահին: Վերջինս ազդարարեց, որ «Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակը հանձնվում է իրանցի ռեժիսոր Աղհար Ֆարհադիին «Նադիր եւ Սիմին. ամուսնալուծություն» ֆիլմի համար: «Արծաթե ծիրան» մրցանակը հանձնեց Փարկ Ջուն-բումին «Մուսանյան նոթեր» ֆիլմի համար, իսկ ժյուրիի հատուկ մրցանակը՝ արգենտինացի ռեժիսոր Պաուլա Մարկովիչին «Պարգեւը» ֆիլմի համար: Այդ ֆիլմը արժանացավ նաեւ Հայաստանի ազգային կինոակադեմիայի «Յուրահատուկ ստեղծագործական հայացք» մրցանակին: Միջազգային վավերագրական ֆիլմերի մրցույթի «Ոսկե ծիրան» գլխ. մրցանակին արժանացավ Ալեքսանդր Նանաուի «Աշխարհը՝ ըստ Յոն Բ.-ի» ֆիլմը, «Արծաթե ծիրան»-ը՝ Լին Թրու, Նելսոն Ուոքեր 3-րդ, Ցերինգ Պերլո «Ամառային արոտավայր» եւ «Հատուկ հիշատակում» մրցանակը՝ Ահմադ Սեյեդքեշմիրի «Հոյակապ ոչինչ» ֆիլմերին: «Հայկական համայնապատկեր» մրցույթի գլխ. մրցանակը հանձնվեց Հարութ Շասյանին «Բեռնելով կյանքս ֆիլմի համար»: «**Ազգ**»-ը այդ ֆիլմը ներկայացրել է իր ընթերցողներին եւ նշել, որ այն հավակնում է մրցանակի: Ի դեպ, այդ ֆիլմն արժանացավ նաեւ Բրիտանական խորհրդի սահմանած մրցանակին եւ Ազգային կինեմատոգրաֆիստների կենտրոնի «Նուարդ» մրցանակին: Նույն անվանակարգում «Արծաթե ծիրան»-ի արժանացավ Էմիլ Մկրտչյանի «Տիեզերանավը» ֆիլմը եւ նաեւ Հրանտ Մաթեւոսյանի անվ. հատուկ մրցանակի, իսկ «Հատուկ հիշատակում»-ին արժանացավ Անաստասիա Պոպովայի «Վարդագույն քաղաքի վերջին հիպին» ֆիլմը: «Կորիզ» կարճամետրաժ ֆիլմերի ծրագրում գլխ. մրցանակը հանձնվեց Պյոտր Սուբոտսկոյի «Գլազգո» ֆիլմին, իսկ «Հատուկ հիշատակում»-ը՝ Սերհաթ Կարաասլանի «Հեծանիվ» ֆիլմին: FPRESCI-ի ժյուրիի մրցանակին արժանացավ Էբրահիմ Սայիդիի «Մանդու» ֆիլմը: Իսկ «Էկումենիկ» կամ եկեղեցիների անկախ ժյուրիի մրցանակը հանձնվեց Կոռնել Գեորգիտայի «Եվրոպոլիս» ֆիլմի համար: Հայտնի կինոռեժիսոր Բելա Տարին փառատոնի տնօրեն Հարություն Խաչատրյանը հանձնեց «Փարաջանովյան տալեր» գլխ. մրցանակը՝ կինոարվեստում ունեցած մեծ ավանդի համար: «Մանթաշյանցի» անվ. մեդալին արժանացան «Փյունիկ» հիմնադրամի համանախագահներ Գաբրիել Ջեմբերջյանն ու Լեւոն Սարգսյանը ու նաեւ «Լաթար» հյուրանոցային համալիրի տնօրեն Ռադիկ Վանունցը: Իսկ «Ոսկե Մանթաշով» մեդալը հանձնվեց ԱԺ պատգամավոր Հարություն Փամբուկյանին՝ ութ տարի շարունակ փառատոնին աջակցելու համար:




# Մրցանակներ «Ոսկե ծիրան» երեւանյան 8-րդ փառատոնի հաղթողներին




Ավարտվեց եւս մեկ տոն, որի մասին դեռ շատ կխոսեն կինոաշխարհում, ուր արդեն հեղինակություն է ձեռք բերել մեր երեւանյան «Ոսկե ծիրան» միջազգային փառատոնը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Սարոյանի ունեցվածքը Ֆրեզնոյի ապրանքապահեստներից մեկում

«Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հունիսի 25-ի համարը Ֆրեզնոյում հրատարակվող «Ֆրեզնո Բի» թերթից արտատպել է Թարա Ալբերտի հոդվածը, որտեղ նշված է, որ Սարոյան անունը այլեւս չի կապվում Պուլիցերյան մրցանակի արժանացած աշխարհահռչակ գրողդրամատուրգ կամ կարճ պատմվածքների վարպետի հետ: Այն ընդամենը Ֆրեզնո քաղաքի կենտրոնում գործող թատրոնի անունն է այժմ:

«Վերջին տարիներին հետաքրքրությունը նրա հանդեպ զգալիորեն նվազել է», նշում է Ֆրեզնոյի հանրային գրադարանի հատուկ հավաքածուների բաժնի մասնագետ Բիլ Սեկրեստը:

«Իսկ նրա անձնական ունեցվածքի մեծ մասը եւ հուշագրությունները այժմ գտնվում են քաղաքի ապրանքապահեստներից մեկում, փոշու մեջ կորած, անմխիթար վիճակում, ավելացնում է Սան Ֆրանցիսկոյում «Վիլյամ Սարոյան հիմնադրամի» նախագահ **Հայկ Մարտիկյանը**, հավելելով, որ առայժմ այդպիսով պահպանվում են՝ մինչեւ որեւէ թանգարան կամ համալսարան համաձայնի իր հարկի տակ «պատսպարել» դրանք:

Ճիշտ է, 2008-ին Ֆրեզնոն նշեց մեծ գրողի ծննդյան հարյուրամյակը, նրա պիեսների բեմադրություններով արվեստի գործերի, լուսանկարների ցուցադրումներով եւ գրքերի քննարկումներով, սակայն տունը, որտեղ երկար ժամանակ ապրել է, արդեն վաղուց չկա, քանդվել է՝ «ճանապարհ հարթելու համար քաղաքաշինության զարգացմանը»:

1981-ին նրա մահվանից հետո Ֆրեզնոյի պետական համալսարանը, գրադարաններն ու թանգարանները հիանալի առիթ ունեին տիրանալու նրա տպագրված եւ անտիպ գործերին եւ պահպանելու դրանք կործանումից: Սակայն նրանք թույլ տվեցին, որ նրա ունեցվածքի մեծ մասը տեղափոխվի Բերքլիի Կալիֆոռնիա համալսարան ու Ստենֆորդ համալսարան: Մնացած նյութերն ու անհատական օգտագործման որոշ իրեր (գրամեքենա, նամակներ, լուսանկարներ եւ նույնիսկ «Օսկարը», որ նա վաստակել էր «Մարդկային կատակերգության» վեպի սցենարի համար), երկար ժամանակ մշտական ցուցադրման էին դրվել Մետրոպոլիտեն թանգարանում:

Ֆրեզնոն փաստորեն կորցրել է մեծ վարպետին:

Հ. Ծ.

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ

# Դոնարա Մկրտչյանը 70-ամյակի օրը կնքեց իր մահկանացուն



**Դոնարա Մկրտչյան. այս դերասանուհուն նոր սերունդը ճանաչում է միայն «Կովկասի գերուհին» եւ «Խաթաբալադա» ֆիլմերից: Մինչդեռ գյումրեցի աղջնակին նկատել ու թատերական ինստիտուտ է հրավիրել (դերասանական ֆակուլտետ) մեր ժամանակների անվանի արվեստագետ Արմեն Գուլակյանը: Վերջինիս մահվանից հետո Դոնարան դերասանական վարպետությունն ու հմտությունները խորացրել է տաղանդավոր բեմադրիչ, ռեժիսոր Վարդան Աճեմյանի կուրսում: 1963-1982 թթ. Դոնարան իր ուրույն խաղաոճով, գյումրեցու համ ու հոտով առանձնանում էր սերնդակիցներից շատերից, մեծերից սովորում ու ուշի-ուշով հետեւում թատրոնի ավանդույթներին:**

**Դոնարա Մկրտչյանի առաջին դերակատարումներից մեկը եղավ «Շաբաթ, կիրակի, երկուշաբթի» պիեսը, այնուհետեւ «60 տարի եւ 3 ժամ», «Սալեմի վհուկները», «Հանրապետության նախագահը», «Բերնարդա Ալբայի տունը», «Ծիրանի ծառ» ներկայացումները եւ այլն: Դերասանուհու ստեղծագործական բարձրակետը հանդիսացավ Էսմերալդայի դերակատարումը՝ «Աշխարհն այո շուռ է եկել» ներկայացման մեջ, որտեղ վառ կերպով արտահայտվեցին նրա կատակերգական ձիրքը, հրաշալի զգացողությունը, կանացի հմայքը, գեղեցկությունը, որոնք մի ամբողջ ներդաշնակություն էին ստեղծում», այսպես բնորոշեց դերասանուհուն թատերագետ Լեւոն Մութաֆյանը: Ովքեր դիտել են «Հանրապետության նախագահը» (Վ. Աճեմյանի ռեժ.) բեմադրությունը, որտեղ Դոնարան մարմնավորում էր Համեստի կերպարը, կհիշեն նրա խաղը հատկապես 2-րդ գործողության մեջ:**

**1982-ին Լ. Մութաֆյանի հրավերով Գյումրու Վ. Աճեմյանի անվ. պետ. դրամ. թատրոն է հրավիրվում դերասանուհին խաղալու Ի. Դրուցեի «Արբություն արբոց» բեմադրության մեջ Մարիայի դերը (բեմադրիչ՝ Վախթանգովի թատ. ռեժ. Եվգենի Լիսկանով), որով նա փայլեց մի առանձնահատուկ դերակատարումով, չընդօրինակելով մինչեւ այդ իր խաղացած որեւէ կերպարին: Այդ դերակատարումը թատրոնի մարդիկ անվանում էին Դոնարայի «կարապի երգը», ստեղծագործական ընթացքի յուրատեսակ ամփոփումը: Հիշարժան էր նաեւ Աբիգայլի դերակատարումը «Սալեմի վհուկները» ներկայացման մեջ, որտեղ Դոնարայի խաղընկերներն էին Լուսյա Հովհաննիսյանն ու Վարդուհի Վարդերեսյանը: Անվանի ու վարպետ դերասանուհիների կողքին չէր զգացվում դերասանուհու անփորձությունը: Նա կարողանում էր դրամատիկական շեշտերով կերպավորել իր դերը, արժանանալով ջերմ ընդունելության: Անմոռանալի էր նաեւ Դոնարա Մկրտչյանի տիկին Անուշի դերակատարումը «Բաղդասար աղբար» ներկայացման մեջ (Վանաձորի պետ. թատրոն), որը հրաշալի ընդունելության արժանացավ նաեւ սփյուռքում: «Դոնարայի տիկին Անուշը տարբերվում էր հայ բեմում մինչ այդ ներկայացված բոլոր անուշներից, առաջին հերթին՝ իր թեթեւությամբ, երիտասարդությամբ, իր անմիջականությամբ, գույների որքան պարզ, այնքան բարդ համադրությամբ՝ շեշտելով սիրո գաղափարը», «Ազգի» հետ զրույցում ասաց Լ. Մութաֆյանը:**

**Դոնարա Մկրտչյանի հետ բախտ եմ ունեցել աշխատելու շուրջ 10 տարի, երբ միասին Հայկական հեռուստատեսությունում նկարահանում էինք Արշավիր Քալանթարյանի «Իմ տունը քո տունը չէ», «Ամառային, աշնանային, ձմեռային, գարնանային կատակներ» շարքերը, որոնք Դոնարա Մկրտչյանը Արծրուն Մանուկյանի հետ այնպես էր վարում, որ նրանք դարձել էին բոլորիս սպասված հյուրը՝ ամեն շաբաթ օրերին: Բազմաթիվ էին ու հետաքրքրական Դոնարայի դերերի մեկնությունները հեռուստաթատրոնում, ռադիոբեմադրություններում, նշեմ միայն մի քանիսը, որոնք առ այսօր հիշողությունիցս չեն անհետացել՝ «Հրաժեշտ հունիսին», «Թե ինչպես շաքարամանից 2 կտոր շաքար պակասեց»...:**

**Ցավոք, Դոնարա Մկրտչյան դերասանուհու խաղին վերջին տարիների երկրպագուները չկարողացան հետեւել: Նա կյանքից հեռացավ ու վերածվեց հուշի: Իր բոլոր տարիների խաղընկերները նրան հիշում եւ բնորոշում են «բարի, ազնիվ ու նվիրված մարդ է, շատ կամեցող եւ ընկերասեր»:**

**Սիրելի դերասանուհի, անկախ ամեն ինչից, դու քո տեղը ու գույնը թողեցիր հայ թատրոնի պատմության մեջ:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Ուղտին հայրենիքը»՝ տիկնիկային ներկայացում Նյու Ջերսիում

**Նյու Ջերսիում գործող Վարդան Գառնիկի Օգանեսյանի «Հայ թատրոն-ստուդիայի» կազմակերպությամբ հունիսի 11-ին «Հայ-ամերիկյան կրթության եւ խրախուսման կենտրոնի» դահլիճում տեղի է ունեցել «Ուղտին հայրենիքը» տիկնիկային ներկայացման պրեմիերան: «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հունիսի 25-ի համարի փոխանցմամբ, յոթ տղաներ եւ աղջիկներ արեւմտահայերենով բեմադրել են երեւանցի Սերգեյ Վարդանյանի կարճ պատմվածքը՝ վերցված 1989-ին հրատարակված «Արեւածաղիկ» ժողովածուից, որը 1994-ին վերահրատարակվել էր Ստամբուլում, Մաքրուհի Հակոբյանի կողմից արեւմտահայերենի վերածված տարբերակով: Վարդանյանը հիմնադիր-խմբագիրն է «Ձայն Համշենական» ամսաթերթի եւ հեղինակ Հայաստանի 12 պատմական մայրաքաղաքներին նվիրված հատորի:**

**Պիեսի հիմքում ընկած է հայրենիքի որոնման գաղափարը: Ուղտը համոզում է մյուս կենդանիներին (սկյուռին, ճագարին, գորտին) միասին ճանապարհ ընկնել, բայց երբ նրանք հասնում են անապատ՝ ուղտի հայրենիքը, հասկանում են, որ իրենց համար չէ այդ վայրը եւ ցրվում են տարբեր վայրեր՝ վերագնահատելով իրենց նախկին օրրանները ու տեղի արժեքները:**

**Վարդան Օգանեսյանը Կապանի Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնի դերասաններից էր, որն հետագայում դարձավ նաեւ գլխավոր ռեժիսոր: 1988-ին Կապանում հիմնել էր տիկնիկային թատրոն, իսկ 1990-ականներին արտագաղթել Մ. Նահանգներ: Վեց տարի եղել է ԹՄՄիության Մհեր Մկրտչյանի անվան թատերախմբի գեղարվեստական ղեկավարը: Ներկայիս պտրուսը վաստակում է հիմնականում զբոսաշրջիկներին ուղեկցելով դեպի Նյու Յորքի, Ֆիլադելֆիայի, Ատլանտիկ Սիթիի եւ այլ քաղաքների ու նահանգների տեսարժան վայրերը:**

**Երեխաների շրջանում մեծ ոգեւորություն առաջացրած տիկնիկային ներկայացումը, որի բեմական հարդարումներն ու տիկնիկների պատրաստությունը կատարել է Վարդանի կինը՝ Անահիտը, նախատեսվում է աշնանը բեմականացնել նաեւ Նյու Յորքի եւ Նյու Ջերսիի տարածաշրջաններում գտնվող հայկական դպրոցներում եւ եկեղեցիներին կից գործող դահլիճներում:**

Հ. Ծ.

# Արոնյանի վրիպումը մեր թիմին զրկեց հաղթանակից



Շախմատի Հայաստանի հավաքականը գերազանց մեկնարկեց Չինաստանի Նինբո քաղաքում սկսված աշխարհի թիմային 8-րդ առաջնությունում՝ 3,5-0,5 հաշվով պարտության մատնելով Իսրայելի ընտրանուն։ Մեր թիմից մրցակցին միակ կես միավորը պարգեւեց Սերգեյ Մովսիսյանը, որն իր նորամուտը նշեց Հայաստանի հավաքականում։ Նրա մրցակիցը Միխայիլ Ռոիզն էր։

Իսկ ահա մեր մյուս 3 շախմատիստները հաղթանակով ավարտեցին իրենց պարտիաները։ 1-ին խաղատախտակի վրա Լեւոն Արոնյանը պարտության մատնեց Էմիլ Սուտովսկուն։ 3-րդ խաղատախտակի վրա Վլադիմիր Հակոբյանը հաղթեց Եվգենի Պոստնիին, իսկ Գաբրիել Սարգսյանն առավելության հասավ Թամիր Նաբատիի նկատմամբ։ Հենց մեկնարկից Հայաստանի հավաքականը գլխավորեց մրցաշարային աղյուսակը բոլոր պարտիաներում վաստակած 3,5 միավորի շնորհիվ։

Մեկնարկային տուրում հաղթեցին նաեւ Ռուսաստանի եւ Ուկրաինայի հավաքականները, որոնք եւս 2 թիմային միավոր վաստակեցին, սակայն բոլոր պարտիաներում վաստակած միավորներով զիջում են հայերին։ Ռուսները 3-1 հաշվով պարտության մատնեցին ԱՄՆ-ի ընտրանուն։ Թիմի հաղթանակն ապահովեցին Յան Նեպոմնյաշչին ու Նիկիտա Վիտյուգովը, որոնք պարտության մատնեցին համապատասխանաբար Ալեքսանդր Օնիշչուկին եւ Ռոբերտ Հեսին։ Կարյակին-Կամսկի, Սվիդլեր-Շուլման պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի։

Ուկրաինայի հավաքականը 2,5-1,5 հաշվով առավելության հասավ Եգիպտոսի շախմատիստների նկատմամբ։ Չինաստան-Ադրբեջան, Հնդկաստան-Հունգարիա մրցախաղերում գրանցվեց ոչ-ոքի՝ 2-2։

2-րդ տուրում Հայաստանի հավաքականը մրցեց ԱՄՆ-ի շախմատիստների հետ։ Առաջինը մրցավեճն ավարտեց Վլադիմիր Հակոբյանը՝ 30-րդ քայլին հաշտություն կնքելով Յուրի Շուլմանի հետ։ Այնուհետեւ Սերգեյ Մովսիսյանն առաջին հաղթական միավորը պարգեւեց իր թիմին՝ սպիտակներով 41-րդ քայլին պարտության մատնելով Ալեքսանդր Օնիշչուկին։ Քիչ անց Գաբրիել Սարգսյանը ոչ-ոքի խաղաց Յասեր Սեյրավանի հետ։ Մրցակիցները հաշտություն կնքեցին 45-րդ քայլին։

Մրցախաղի ելքը պետք է վճռեր Գատա Կամսկու եւ Լեւոն Արոնյանի մրցավեճը, որը վերջինն ավարտվեց։ Մրցակիցներից յուրաքանչյուրը հնգական զինվոր ու թագուհի ուներ, դիրքն էլ հավասար էր։ Սակայն Արոնյանը վերջնախաղում հստակ չխաղաց, զինվորներ կորցրեց, եւ մրցակիցը 2 անցողիկ զինվոր ունեցավ։ Ի վերջո, 80-րդ քայլին Արոնյանը հանձնվեց, ու հաշիվը հավասարվեց՝ 2-2։

2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց ՌԴ հավաքականը՝ 3-1 հաշվով պարտության մատնելով հունգարացիներին։ Իսկ ահա ուկրաինացիները 1,5-2,5 հաշվով զիջեցին Չինաստանի հավաքականին։ Միեւնույն 3-1 հաշվով Ադրբեջանը հաղթեց Հնդկաստանին, Իսրայելը՝ Եգիպտոսին։

2 տուրից հետո 4 միավորով աղյուսակը գլխավորեց Ռուսաստանի հավաքականը։ 3-ական միավոր են վաստակել Հայաստանի, Չինաստանի եւ Ադրբեջանի ընտրանիները։ Երրորդ տուրում մեր թիմը կմրցի ռուսների հետ։

# Համահայկական 5-րդ խաղերին կմասնակցեն մոտ 3 հազար մարզիկներ շուրջ 100 երկրից

Օգոստոսի 13-ին Երեւանում կտրվի Համահայկական 5-րդ խաղերի մեկնարկը, որը նվիրված է Հայաստանի անկախության 20-ամյակին։ Խաղերի նշանաբանն է՝ «Միասնություն սպորտի միջոցով»։ Համահայկական առաջին խաղերը կայացել են 1999-ին, որին մասնակցել են 62 քաղաքների 1150 մարզիկներ։ 3-րդ խաղերից հետո որոշվեց 2 տարվա փոխարեն խաղերն անցկացնել 4 տարին մեկ։ Այսօր արդեն հայտեր են ստացվել 86 քաղաքների 2214 մարզիկներից։ Սպասվում է, որ քաղաքների թիվը կհասնի 100-ի, իսկ մարզիկներինը՝ 3 հազարի։ Այս մասին Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահի մամուլի սրահում երեկ տեղի ունեցած ասուլիսում տեղեկացրեց Համահայկական 5-րդ խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ **Իշխան Զաքարյանը**, որը բոլորովին վերջերս է ստանձնել այդ պաշտոնը՝ փոխարինելով Արմեն Գրիգորյանին։




Իշխան Զաքարյանը նշեց, որ խաղերի օրերին սպասվում է 8-10 հազար զբոսաշրջիկների այց Հայաստան։ Մասնակիցները բոլոր ծախսերն իրենք են հոգալու։ Խաղերի կազմակերպման եւ անցկացման համար պետբյուջեից 80 մլն դրամ է հատկացվել, որը դեռեւս չի ստացվել։ Ըստ Զաքարյանի, այդ գումարը չի բավականացնի, ուստի կազմկոմիտեն մի խումբ հովանավորների է ընդգրկել, որոնք կաջակցեն միջոցառման բարձր մակարդակով անցկացմանը։

Համահայկական 5-րդ խաղերի ծրագրում ընդգրկված է 10 մարզաձեւ. ֆուտբոլ, ֆուտզալ, բասկետբոլ, վոլեյբոլ, լող, թեթեւ ատլետիկա, բադմինտոն, թենիս, սեղանի թենիս եւ շախմատ։ Արդեն հստակ որոշված են այն մարզադահլիճներն ու մարզադաշտերը, որոնցում անցկացվելու են մրցումները։ Ընդ որում նույնիսկ մասնավոր անձանց պատկանող մարզակառույցները տրամադրվելու են անվճար։ Իսկ «Զվարթնոց» օդանավակայանում խաղերի ժամանած մասնակիցներից վիզայի համար գումար չի գանձվելու։

Իշխան Զաքարյանը տեղեկացրեց նաեւ, որ Վերահսկիչ պալատի ներկայացուցիչները կհսկեն խաղերի կազմակերպման հետ կապված ֆինանսական բոլոր հարցերը։ Նա խոստացավ խաղերի ավարտից հետո լրատվամիջոցներին ներկայացնել ֆինանսական հաշվետվություն Համահայկական 5-րդ խաղերի կազմակերպման եւ անցկացման նպատակով ծախսած գումարների։

# Յոժեֆ Բուբենկոն գլխավորեց «Միկան»

**Ինչպես տեղեկացանք «Միկա» ակումբից, թիմի ղեկը ստանձնել է 60-ամյա սլովակ մարզիչ Յոժեֆ Բուբենկոն։ Նա կփոխարինի Էդուարդ Մարգարովին, որն Արմեն Շահգելդյանի պաշտոնանկությունից հետո ժամանակավորապես ստանձնել էր թիմի գլխավոր մարզչի պաշտոնը։ Ակումբի ղեկավարությունը շնորհակալություն է հայտնել Էդուարդ Մարգարովին եւ Մամիկոն Ղարիբջանյանին, որոնք վերադարձել են իրենց նախկին աշխատանքին։ Մարգարովը կշարունակի կատարել «Միկայի» մանկապատանեկան մարզադպրոցի տնօրենի, իսկ Ղարիբջանյանը՝ փոխտնօրենի եւ մանկապատանեկան ծրագրի ղեկավարի պարտականությունները։**

**Յոզեֆ Բուբենկոյին մարզչական աշխատանքում կօգնեն Հակոբ Մկրյանը, Տիգրան Ասլանյանը եւ Արամ Ոսկանյանը։ Բուբենկոն ժամանակին աշխատել է Սլովակիայի երիտասարդական հավաքականում, Բրատիսլավայի «Ինտերում», որին 2 անգամ երկրի չեմպիոն է դարձրել։ Նա մարզել է նաեւ հունական «Պանիոնիս» եւ «Իրակլիս» թիմերը։ Նա Երեւան է ժամանել իր օգնականի՝ 38-ամյա Ժոլտ Հորնյակի հետ, որը նախկինում հանդես է եկել «Ինտերում», «Սլովանում» եւ մի շարք այլ թիմերում։ Սլովակ մարզիչը «Միկայի» գլխավոր մարզչի պաշտոնում նորամուտը կնշի հուլիսի 21-ին Երեւանում նորվեգական «Վոլերենգայի» հետ Եվրոպայի լիգայի մրցաշարի պատասխան խաղում։ Ինչպես հայտնի է, «Միկան» հյուրընկալվելիս 0-1 հաշվով զիջել է մրցակցին եւ պետք է ձգտի սեփական հարկի տակ ռեւանշի հասնել։**

# Մրցանակի հավակնորդները դուրս մնացին պայքարից

Ֆուտբոլի Ամերիկայի գավաթի մրցաշարում հայտնի դարձան կիսաեզրափակիչի մասնակիցները։ Բրազիլիայի հավաքականը պարագվայցիների հետ խաղում շատ անհաջող իրացրեց 11 մ հարվածաշարը (հիմնական եւ լրացուցիչ ժամանակում հաշիվը չէր բացվել)՝ 4 հարվածներից ոչ մեկը նպատակին չհասցնելով։ Պարագվայցիներին 2 դիպուկ հարվածը բավական էր խաղը շահելու համար։ Կիսաեզրափակիչում հուլիսի 20-ին Պարագվայի հավաքականը կխաղա Վենեսուելայի ընտրանու հետ, որը 2-1 հաշվով հաղթեց Չիլիին։

Պայքարից դուրս մնաց նաեւ Արգենտինայի ընտրանին, որն ուրուգվայցիների հետ խաղում (հիմնական եւ լրացուցիչ ժամանակում՝ 1-1) եւս պարտվեց հետխաղյա 11 մ հարվածներով (4-5)։ Ուրուգվայի հավաքականն այսօր կմրցի Սերխիո Մարգարյանի սաների՝ Պերուի ֆուտբոլիստների հետ, որոնք լրացուցիչ ժամանակում 2-0 հաշվով պարտության մատնեցին կոլումբիացիներին։



# Մեդալների հարուստ ավարով

**Գրոզնիում ավարտված բռնցքամարտի դպրոցականների (13-14 տարեկաններ) Եվրոպայի առաջնությունում հաջող ելույթներ ունեցան Հայաստանի պատվիրակները՝ նվաճելով 2 ոսկե, 4 արծաթե եւ 3 բրոնզե մեդալ։**

**Ոսկե մեդալների արժանացան Գառնիկ Պապիկյանը (38,5 կգ) եւ Հրայր Շահվերդյանը (41,5 կգ)։ Արծաթե մրցանակակիրներ դարձան Ռազմիկ Անտոնյանը (40 կգ), Վիկտոր Յուզիկնովիչը (62 կգ), Ալյոշա Ստամբոլցյանը (72 կգ) եւ Գնել Մուրադյանը (+76 կգ)։ Բրոնզե մեդալներով պարգեւատրվեցին Սպարտակ Թամարյանը (44,5 կգ), Արարատ Սիմոնյանը (46 կգ) եւ Զաքար Խաչատրյանը (48 կգ)։ Թիմային պայքարում Հայաստանի հավաքականը 2-րդն էր ռուսներից հետո։**

# Վախթանգ Դարչինյանը պարգեւատրեց մրցանակակիրներին

**Մայրաքաղաքի «Դինամո» մարզադահլիճում իրենց մրցավեճն ավարտեցին բռնցքամարտիկները, որոնք վիճարկեցին Հայաստանի մեծահասակների չեմպիոնի տիտղոսը։ Ռինգ դուրս եկած 127 բռնցքամարտիկներից 14-ը գեղեցիկ սեռի ներկայացուցիչներ էին, որոնք հաղթողներին որոշեցին քաշային 5 կարգերում։ Ուժեղագույնի տիտղոսը նվաճեցին Անուշ Գրիգորյանը (48 կգ), Արմենուհի Եղոյանը (52 կգ), Լիանա Դուկասյանը (56 կգ), Արմինե Սինանյանը (60 կգ) եւ Աննա Հովհաննիսյանը (69 կգ)։**

**Ինչ վերաբերում է տղամարդկանց մրցաշարին, ապա ոչ բոլոր ուժեղագույններն էին մասնակցում։ Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Մեհրաբյանը նշեց, որ Եվրոպայի առաջնությունից հետո նրանց հանգստանալու հնարավորություն է տրվել։**

**Ամենաթեթեւագույն քաշային կարգում (49 կգ) չեմպիոն հռչակվեց Սուրեն Առաքելյանը, որը եզրափակիչում պարտության մատնեց Գեւորգ Թովմասյանին։ Քաշային հաջորդ կարգում (52 կգ) հաջողությունն ուղեկցեց արդեն զգալի փորձ ունեցող ՀՀ հավաքականի անդամ Դերենիկ Գիժլարյանին, որը վճռորոշ մենամարտում պարտության մատնեց Բարեղամ Հարությունյանին։ Քաշային այս կարգում մրցանակակիրներին պարգեւատրեց Վախթանգ Դարչինյանը, որը Հայաստան է ժամանել նախապատրաստվելու սեպտեմբերի 3-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում նամիբիացի Պաուլյուս Ամբունդայի հետ կայանալիք մենամարտին։**

**Անվանիներից չեմպիոնի տիտղոսին արժանացան նաեւ Անդրանիկ Հակոբյանը (75 կգ) եւ Բագրատ Օհանյանը (գերծանր քաշ)։ Երկուսի մենամարտերն էլ անցան լարված մթնոլորտում եւ բավական կրքեր բորբոքեցին։ Անդրանիկ Հակոբյանի մրցակիցն Արմեն Եփրեմյանն էր։ Երբ մրցավարները հաղթանակը շնորհեցին Հակոբյանին, դահլիճում բուռն դժգոհություն առաջացավ ու հարկ եղավ նույնիսկ ոստիկանության միջամտությունը։**

**Իսկ Բագրատ Օհանյանի եւ Հակոբ Մելքոնյանի մենամարտին միջամտեց գլխավոր մրցավար Ասոտ Պողոսյանը։ Առաջին ռաունդի վերջում Բագրատը հուժկու հարված ընդունեց եւ ռինգի մրցավարը բացեց հաշիվը։ Նա որոշեց, որ Օհանյանը չի կարող շարունակել մենամարտը ու տեխնիկական հաղթանակ շնորհեց Հակոբ Մելքոնյանին։ Սակայն Օհանյանը ռինգից բողոքարկեց այդ վճիռը եւ մրցումների գլխավոր մրցավար Ասոտ Պողոսյանի ցուցումով հանդիպումը շարունակվեց։ Օհանյանին ի վերջո հաջողվեց միավորներով շահել մենամարտը։ Մրցավարների վճռից դժգոհելով, Մելքոնյանը պարգեւատրման ժամանակ հրաժարվեց արծաթե մեդալից, իսկ պատվոգիրը պատռեց։ Այս միջադեպն առաջիկայում կքննարկվի բռնցքամարտի ֆեդերացիայում եւ ամենայն հավանականությամբ Մելքոնյանը կպատժվի։**

**Քաշային մյուս կարգերում չեմպիոններ հռչակվեցին Ալեքսան Շախյանը (56 կգ), Արա Պլուզյանը (60 կգ), Հրայր Մաթեւոսյանը (64 կգ), Արթուր Քիրաջյանը (69 կգ), Ռուսլան Իբրահիմյանը (81 կգ) եւ Ազատ Դավթյանը (91 կգ)։**

# Տիգրան Պետրոսյանը շահեց գլխավոր մրցանակը



**Տիգրան Պետրոսյանը հիանալի հանդես եկավ իսպանական Բենասկ քաղաքում անցկացված շախմատի մրցաշարում՝ արժանանալով 4 հազար եվրո գլխավոր մրցանակին։ Տիգրանը 10 հնարավորից վաստակեց 8,5 միավոր ու գրավեց առաջին տեղը։ Ավարտական 2 տուրերում հայ գրոսմայստերը նախ ոչ-ոքի խաղաց Գեորգի Տիմոշենկոյի հետ, ապա շահեց վճռորոշ պարտիան Թվան Բուրգի հետ մրցավեճում, որը Պետրոսյանի, Ալեքսանդր Դելչեւի եւ Խուլիո Գրանդայի հետ վաստակել էր 7,5-ական միավոր։ 10-րդ տուրում Դելչեւն ու Գրանդան հաշտություն կնքեցին ու Պետրոսյանից հետ մնացին կես միավորով։**

**Տիգրան Պետրոսյանը գերազանց անցկացրեց մրցաշարը՝ չկրելով ոչ մի պարտություն։ Անցկացրած 10 պարտիաներից 7-ում նա հաղթեց, 3-ն ավարտեց ոչ-ոքի։ Ընդ որում մեկնարկից Տիգրանը 6 անընդմեջ հաղթանակ էր տոնել։**

**Անպարտելի մնաց նաեւ Զավեն Անդրեասյանը, որը 7,5 միավորով գրավեց 14-րդ տեղը։ Զավենը վերջին 2 տուրերում հաշտություն կնքեց չեխ Իրժի Ստոչեկի եւ իրանցի Էլշան Մորադիաբադիի հետ։ Հայաստանի 3-րդ ներկայացուցիչը՝ Կարեն Մովսիսյանը վերջնագծում անհաջող խաղաց ու արդյունքում 6,5 միավորով զբաղեցրեց 46-րդ տեղը։ 9-րդ տուրում նա հաղթեց իսպանացի Դանիել Մորենոյին, իսկ մրցաշարն ավարտեց իսպանացի մեկ այլ շախմատիստից՝ Դավիթ Պարդոյից կրած պարտությամբ։**

# Սիմոնյանը միջին դիրքերում է

**Հունաստանում ավարտին է մոտենում շախմատի մրցաշարը։ 8 տուրից հետո Տիգրան Սիմոնյանն ունի 5 միավոր։ 6-րդ տուրում նա ոչ-ոքի խաղաց հնդիկ շախմատիստ Յայարամ Աշվինի հետ, ապա պարտվեց հույն Նիկոլաս Թեոդորուին, իսկ հետո հաղթեց նրա հայրենակից Պանայոտիս Պապադոպուլոսին։**

**Աղյուսակը 6,5-ական միավորով գլխավորում են Յուրի Կրիվոռուչկոն, Խրիստոս Բանիկասը, Մոմչիլ Նիկոլովը եւ Մարին Բոսիոչիչը։**

# «Բանանցը» հաղթեց «Մեսին»

**Հայաստանում ուսումնամարզական հավաք անցկացնող Իրանի «Մես» թիմը, որը բարձրագույն խմբի ուղեգիր է նվաճել, Ավանի ֆուտբոլի ակադեմիայում ստուգողական խաղում ուժերը չափեց «Բանանցի» հետ։ Խաղն անցավ «Բանանցի» առավելությամբ, որը հաղթեց 3-0 հաշվով։ Հաշիվն առաջին խաղակեսում բացեց Արսեն Բալաբեկյանը, իսկ ընդմիջումից հետո 2 գոլի հեղինակ դարձավ Խաչատուր Ավետիսյանը։**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Խելացի տներ, մաքուր մեքենաներ, պտտվող շենքեր...

### *Միկրոէլեկտրոնիկայի զարգացումը երազանքներն իրականություն կդարձնի*

«Խելացի» տունը ճանաչում է տանտիրոջը եւ նրա առջեւ բացում դուռը: Բանալու կարիք այլեւս չկա: Ներս մտնելուց հետո տան կամ առանձին սենյակների լույսերը վառվում են տանտիրոջ նախընտրած ուժգնությամբ, հեռուստացույցը կամ երաժշտական կենտրոնը միանում են տանտիրոջ նախասիրությունն ու տրամադրությունը հաշվի առնելով: Նույն կերպ կարգավորվում են նաեւ տան ջերմաստիճանը, գունային լուծումները, սենյակների լուսավորությունը՝ ըստ օրվա ժամերի եւ տարվա եղանակների, լողարանի եւ ջրի ջերմությունը եւ այլն:

Այս ամենն արդեն իսկ իրականություն է եւ հնարավոր է դարձել գիտական եւ տեխնոլոգիական նվաճումների շնորհիվ: Մարդու երեւակայությունն անսահման է, ինչպես եւ մտքի թռիչքը: Դա նշանակում է, որ այսօր աներեւակայելի թվացող գաղափարները վաղն անպայման իրականություն են դառնալու, եւ առաջիկա 20 տարիներին մի քանի նման տեխնոլոգիական հրաշքներ ենք տեսնելու:

Օրինակ՝ «մաքուր մեքենա», որը փոշի է կլանում եւ մաքուր օդ արտաշնչում: Կամ՝ «ներկայության պատրանք ստեղծող տեսալսողական միջավայր», որը ստեղծում է մեր ամենօրյա կյանքի նմանակ 3D միջավայր: Բարդագույն տեխնոլոգիաներով օժտված էկրանն իր ինտերիերային պատերով եւ շարժմանն արձագանքող տեսախցիկներով ներկայության պատրանք է առաջացնում՝ պասիվ էկրանից վերածվելով ակտիվ գործընկերոջ: Իսկ պտտվող աշտարակներով շենքերն իրենց անհրաժեշտ էներգիան ստեղծում են քամուց:

Վերջին 50 տարում մարդկության պատմության մեջ գրանցված ամենանշանակալի ձեռքբերումների, տիեզերքի հետազոտման ու նվաճման ժամանակագրության ու ոչ հեռավոր ապագայում միկրոէլեկտրոնիկայի հավանական նոր նվաճումների մասին է խոսվել Կանարյան կղզիներում այս տարվա հունիսին, առաջին տիեզերագնաց Յուրի Գագարինի պատմական թռիչքի 50-ամյակին նվիրված ՍԹԱՐՄՈՒՍ փառատոնի ժամանակ: Փառատոնին մասնակցել են հայտնի գիտնականներ, տիեզերագնացներ, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի համաշխարհային ճանաչում ունեցող ընկերությունների ղեկավարներ: «Սինոփսիս» ընկերության փոխնախագահ Ռիչ Գոլդմանի ելույթն անդրադարձ էր միկրոէլեկտրոնիկայի զարգացման պատմությանը:

Տրանզիստորի հայտնաբերումը 1947թ.-ին Bell Labs հետազոտական կենտրոնի անդամների կողմից դարձավ բազմաթիվ նորարարությունների ներդրման եւ տեխնոլոգիայի զարգացմանը խթանելու կարեւորագույն գործոն: Հետո, 1958-ին՝ Texas Instruments-ի ինժեներ Ջեք Քիլբիի կողմից ստեղծված առաջին ինտեգրալ սխեման դարձավ ժամանակակից միկրոէլեկտրոնիկայի հիմքը: Շուտով ինտեգրալ սխեմաները սկսեցին օգտագործվել հաշվիչների եւ համակարգիչների արտադրության մեջ առանձին տրանզիստորների փոխարեն, ինչը թույլ տվեց զգալիորեն նվազեցնել չափը եւ բարձրացնել արտադրողականությունը:

Տեխնոլոգիական առաջընթացով պայմանավորվեց նաեւ տիեզերքի նվաճման սկիզբը: 1957-ին ԽՍՀՄ-ն ուղեծիր ուղարկեց Երկրի առաջին արհեստական արբանյակը՝ «Սպուտնիկ-1»-ը: 1959թ.-ին «Լունա-2» կայանը առաջին անգամ հասավ Լուսնի մակերեւույթին: 1961-ի ապրիլին Յուրի Գագարինը առաջին թռիչքը կատարեց տիեզերք: 1965-ին Ալեքսեյ Լեոնովը դուրս եկավ բաց տիեզերք: 1969-ին Նեյլ Արմսթրոնգն առաջին անգամ ոտք դրեց Լուսնի վրա:

Գիտատեխնիկական հեղափոխությունը նոր թափ ստացավ, երբ 1968-ին Intel ընկերության հիմնադիր Գորդոն Մուրը կռահեց, որ մեկ չիպի վրա տրանզիստորների քանակը մեկ եւ կես տարվա ընթացքում կրկնապատկելով, պրոցեսորները կդառնան ավելի էժան եւ արագագործ, իսկ դրանց արտադրությունն ավելի զանգվածային: 1971-ին արտադրված Intel-4004 առաջին միկրոպրոցեսորի մեջ 2300 տրանզիստոր կար, երբ 1969-ին Fairchild ընկերության ամենաբարդ չիպում ընդամենը 64 տրանզիստոր կար: 1989-ին Intel 486 պրոցեսորում դրանց թիվն արդեն 1,2 մլն էր, 2000-ին Intel Pentium 4-ում՝ 42 մլն: Նոր քառամիջուկ Intel Core 2 Extreme պրոցեսորը պարունակում է 820 միլիոն տրանզիստոր:

1975-ին IBM-ը թողարկեց առաջին սարքը, որը կարելի էր անվանել անձնական համակարգիչ: 1976-ին ստեղծվեց ամերիկյան Cray Research Inc ընկերության առաջին սուպերհամակարգիչը՝ Cray -1, որը 240 մլն լողացող ստորակետով թվաբանական գործողություններ էր կատարում մեկ վայրկյանում, իսկ նրա արժեքը կազմում էր 4-11 միլիոն դոլար: Սակայն այսօր 2010-ի արտադրության iPhone-ը 689 անգամ ավելի հզոր է, քան Columbia մաքոքի համակարգիչները, իսկ գինը տատանվում է մի քանի հարյուր դոլարի սահմաններում:

Միկրոէլեկտրոնիկայի աներեւակայելի տեմպերով զարգացման շնորհիվ, բջջային հեռախոսներում, տեսախցիկներում եւ այլ էլեկտրոնային սարքերում, 1 քառ. մմ մակերեսի վրա տեղադրված են 2 մլրդ տրանզիստորներ: Ունենք բջջային հեռախոսներ, որոնց չափերը գնալով փոքրանում են, իսկ ֆունկցիոնալությունը՝ ավելանում, «խելոք» մեքենաներ, որոնք շարժվող համակարգիչներ են եւ շատ ավելի հզոր են, քան 60-ականներին տիեզերանավերի վրա տեղակայված թռիչքի կառավարման համակարգիչները:

Վերոնշյալը կասկած չի թողնում, որ առավել քան իրական են առաջիկայում նոր, ցնցող նվաճումներն ու դրանց կիրառությունը կյանքում: Հայաստանը կարող է իր լուրջ դերն ունենալ այս գործընթացում, քանի որ խորհրդային ժամանակներից այդ երկրի միկրոէլեկտրոնիկայի կենտրոններից էր, իսկ ներկայումս «Սինոփսիսի» եւ մի շարք բուհերի համագործակցության շրջանակներում իրականացվում են միկրոէլեկտրոնիկայի կրթական ծրագրեր, որոնք ընդօրինակելի են դարձել նաեւ այլ երկրների համար: Ակնհայտ է, որ գիտության կիրառական նշանակություն ունեցող այս ճյուղում կատարված ներդրումները բազմապատիկ ավելի մեծ եկամուտներ կբերեն:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Ծիրանի արտահանումը՝ ոգեւորիչ թվերով



Անցած ուրբաթ ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը գյուղոլորտում այս օրերին ծավալվող գործընթացներից մեկի՝ ծիրանի բերքի արտահանման վերաբերյալ հանրությանը մի անչափ հետաքրքրող թիվ ներկայացրեց. ՀՀ-ից արտահանվել է 7 հազար տոննա ծիրան: Ընդգծվեց, որ այս պտղի ոչ առատ բերքի պայմաններում ցուցանիշը բավարար պետք է գնահատել:

Ի՞նչ է 7.000 տոննա արտահանված ծիրանի բերքը, որն այս տարի հիմնականում հասունացել է Արարատի ու Արմավիրի մարզերում: Ըստ ՀՀ գյուղնախարարության 2008 թվականի «Հայաստանի գյուղատնտեսությունը» հրապարակման՝ Արարատի մարզում գյուղաբնակներ են 194 հզ. մարդ, Արմավիրում՝ 180 հզ. մարդ, միասին՝ 374 հզ. գյուղաբնակ: Հայկական այս մրգի արտահանման պատվավոր գործընթացին նրանց միջին մասնակցությունը պարզելու նպատակով 7 հզ. տոննան, որը 7 մլն կգ է, բաժանենք 374 հազարի. ստանում ենք մոտ 20 կգ թիվ: Թե ոգեւորության ինչ աստիճանի լիցք է պարունակում այս թիվը, չփորձենք գուշակել: Այ եթե բազմապատկենք ընտանիքների միջին 4-5 թվակազմով, 80-100 կգ արտահանումը ինչ-որ պատկեր ստեղծում է, ասենք՝ 20-25 հազար դրամի մուտք, անշուշտ տարվա կտրվածքով ողջ ընտանիքի համար: Չենք բացառում, որ բերքառատ տարիներին այս գումարը կարող է կրկնապատկվել, անգամ եռապատկվել: Նկատենք նաեւ, որ մեզանում արձանագրվում են բերքի առավել պակաս տարիներ:

Իրականում արտահանողներին ներկայացնելու 100 կգ-ի սահմաններում բերք ուներ գյուղացիական տնտեսություններից յուրաքանչյուրը, քանզի գնորդները հիմնականում պահանջում են ծիրանենիների առավել արեւ տեսած պտուղները: Մնացածը վաճառվեց մեր շուկայում, միջինը՝ 600-700 դրամով, իսկ առավել ցածր որակի ու տեսքի ծիրանը՝ 350-500 դրամով: Դժվար է ասել՝ ՀՀ բոլոր բնակիչները հնարավորություն ունեցա՞ն համտեսելու բաղձալի պտուղը, թե՞ եղան նաեւ գնել չկարողացողներ: Ինչեւէ, 20-օրյա համազգային ծիրանասպասումն ու ծիրանավայելքն ավարտվեցին:

Այսուհանդերձ գործընթացը նաեւ այլ դրսեւորում ունի, քանզի բերքն ինքն իրենով չի լինում: Ծառի պահպանումն ու բերքի հասունացումը ծախսեր են պահանջում, ասենք, ջրելու, պարարտացնելու, սրսկումների աշխատանքներ: Արդյոք սրանք այնքան աննշա՞ն ծախսեր են, որ ծիրան մշակողների եւ արտահանման ներկայացնողների տրամադրություններում ի վերջո ոգեւորության որոշակի դրսեւորումներ են արձանագրվում: Պատասխանը ակնկալում ենք գյուղնախարարության համապատասխան մասնագետներից:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**

*ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ*

# Առանց սկզբունքների համաձայնեցման խաղաղության պայմանագիր չես մշակի

*1-ին էջից*

**«... Կազանից հետո պետքարտուղար Քլինթոնը հեռախոսով խոսել է նախագահներ Սարգսյանի ու Ալիեւի հետ: Ուստի ներկայում շատ ակտիվ փուլ է, եւ ես կարծում եմ, որ մենք պետք է զգույշ լինենք հապճեպ եզրակացություններ չանելու կամ արագորեն գնահատականներ չտալու՝ այս դիվանագիտության արդյունքների վերաբերյալ: Առաջիկա շաբաթներին մենք կտեսնենք գործադրվող ջանքերի արդյունքները», հայտարարել է ամերիկացի համանախագահը, ընդգծելով նաեւ Ֆրանսիայի, ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի սերտ համագործակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափում:**

**«Դեսպան Ֆասիեն հիշատակեց (Ռուսաստանի) արտգործնախարար Լավրովի այցը Վաշինգտոն, եւ այդ այցի ընթացքում Լավրովը հանդիպել է նախագահ Բարաք Օբամայի եւ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ, ու Սպիտակ տունը շատ պարզորոշ կերպով ի ցույց է դրել իր աջակցությունը՝ Լավրովի ու նախագահ Մեդվեդեւի ջանքերին», ասել է Բրադկեն:**

## Մոսկվայում

**Երեկ ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային ընթացքը քննարկման թեմա էր նաեւ Մոսկվայում՝ արդեն ՌԴ եւ Ադրբեջանի արտգործնախարարների մասնակցությամբ: Ըստ «ՌԻԱ Նովոստի» գործակալության՝ Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը ՌԴ ԱԳ նախարարին երեկ հանձնել է Բաքվի պատասխանն այն առաջարկներին, որ Լավրովը Բաքվին էր ներկայացրել իր այցելության ընթացքում՝ հուլիսին, մինչ այդ առաջարկներ ներկայացնելով նաեւ Երեւանում: Թե ինչ պատասխան է տվել Ադրբեջանը ՌԴ նախագահ Մեդվեդեւի առաջարկներին՝ ոչ Լավրովը, ոչ էլ Մամեդյարովը չեն տեղեկացրել: Վերջինը միայն նշել է, որ պետք է սպասել նաեւ հայկական կողմի պատասխանին:**

**Ընդհանուր առմամբ առաջընթաց որակելով կազանյան հանդիպումը՝ Մամեդյարովը հայտարարել է առանց հստակեցման, թե ում նկատի ունի. «Առկա վիճակը չի բավարարում կողմերից ոչ մեկին, նաեւ միջնորդներին, այն դարձել է ոչ ընդունելի նաեւ մեր հարեւանների համար»:**

**Այցելության ընթացքում նաեւ փոխանակելով Ռուսաստան-Ադրբեջան պետական սահմանի վավերացված պայմանագրի պատվոգրերը՝ Մամեդյարովը, ըստ ադրբեջանական կայքէջերի, առանց ամաչելու հայտարարել է, թե Ադրբեջանը Կազանի հանդիպումը առաջ քայլ է համարում, «չնայած քննարկումը տեւեց ավելի քան 4 ժամ եւ կոնկրետ տոնայնությամբ այն հարցերի շուրջը, որոնց առնչությամբ դեռեւս բեկման չենք հասել, այդուհանդերձ որոշ հարցերում մերձեցում զգացվում է»:**

**Մոսկվայում էլ Մամեդյարովը խոսել է խաղաղ պայմանագրի մշակմանն անցնելու մասին՝ հիմնարար սկզբունքները դեռեւս չհամաձայնեցրած, ինչին Հայաստանի արտգործնախարարի արձագանքը արդեն ներկայացրել ենք վերեւում: Ադրբեջանի «առանց սկզբունք» բանակցելու պատրաստ արտգործնախարարը կրկին «պտտել» է ադրբեջանցի երեխայի մահվան պատմությունը:**

**Սերգեյ Լավրովն էլ, ըստ «Վեստի» հեռուստաընկերության եթերը վկայակոչող «Պանորամա.ամ»-ի, ադրբեջանցի լրագրողի խնդրանքով մեկնաբանելով շաբաթ օրը ադրբեջանական կողմի տարածած այն տեղեկատվությունը, թե ադրբեջանական Թովուզի շրջանում 13 տարեկան Այգյուն Շամխալիեւան պայթուցիկ սարքից զոհվել է, նախ նշել է, որ միջադեպի առնչությամբ Ադրբեջանի իշխանությունները քրեական գործ են հարուցել: Լավրովը կոչ է արել լրագրողներին՝ մինչեւ դատական գործի ավարտը զերծ մնալ «ահաբեկչական գործողություն ու վանդալիզմ» որակումներից: ՌԴ արտգործնախարարն ասել է. «Ռուսաստանի Դաշնությունը դատապարտում է ցանկացած բռնի գործողություն ղարաբաղա-ադրբեջանական սահմանային շփման գծում»:**

## Կրկին Երեւան, բայց՝ ԵԱՀԿ Մինսկի խումբ

**«Համանախագահները կրկին ընդգծել են երկու նախագահներին հիմնարար սկզբունքների հիման վրա համաձայնագրի հասնելու կարեւորությունը՝ համաձայնագիրը որպես վերջնական կարգավորման բանակցություններին անցնելու շրջանակ», երեկ, ըստ ԵԱՀԿ պաշտոնական կայքէջի, երեւանյան հանդիպումների ավարտին այսպիսի հայտարարություն են ընդունել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադկեն, Բեռնար Ֆասիեն եւ Իգոր Պոպովը: Այս ընդգծումը թերեւս ոչ թե Ադրբեջանի նախագահի, այլ արտգործնախարարի համար է, որպեսզի վերջինս իրականությունը չլցնի դրան չհամապատասխանող դատողություններով, թե հարկ է անցնել միանգամից խաղաղ համաձայնագրի մշակմանը՝ առանց ավարտելու աշխատանքը հիմնարար սկզբունքների ուղղությամբ:**

**Համանախագահները նաեւ հայտարարությամբ ընդգծել են, որ ժամանակն է քաղաքական կամք դրսեւորելու, որն անհրաժեշտ է «տարածաշրջանի ժողովուրդներին տեւական խաղաղություն, անվտանգություն ու հաշտեցում բերելու համար»: Ըստ համանախագահների՝ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները պատրաստ են շուտով տրամադրել իրենց արձագանքը «շրջանակային փաստաթղթի համար առաջարկված վերջին ձեւակերպումների առնչությամբ եւ շարունակել աշխատանքը համանախագահների ու համանախագահող երկրների կառավարությունների հետ՝ խաղաղ կարգավորման որոնման գործընթացում»:**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 18.7.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: